ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3174 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ԱՊՐԻԼ 1882 Ն. Տ. 10 ՄԱՅԻՍ 1882

ՄԱՍԻՍ
ԼՐԱԳԻՐ

30 ՓԱՐԱՅ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

30 ՓԱՐԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին	Կ. Պոլսոյ համար	10	Մէճիտ
»	» Գաւառաց	» 12	»
Վեցամսեայ	» Կ. Պոլսոյ	» 5 1/2	»
»	» Գաւառաց	» 6 1/2	»

Օտար թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի:

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս մնացած լրագրոյ ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է:

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պէտք է ուղղել: Կ. Պոլիս Պահճէ—Գափու Ճէլալ Պէյ խան թիւ 31 Մասիսի գրասենեակը:

Ճամբու ծախքը չվճարուած նամակ չընդունիր:

Տպուած նամակ, յօդուած, եւայլն ետ չեն տրուիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական.— Խառն.— Ազգային լուրեր.— Ազգային Տեսութիւն. (Բարեկարգութիւն Հայաստանեայց հին եկեղեցւոյ մէջ).—Թղթակցութիւն ի Քրդահայաստանէ.—Դպրոցասէր տիկնանց վարժարան եւ Գրասէր Աստ.—Ծիգուհիք ի Վան.—Ազգ. Հայուհեաց Ընկերութիւն.—Թերթօն Մասիսի.—Հանգանակութիւն.— Ազդք:

Կ. ՊՈԼԻՍ 28 ԱՊՐԻԼ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաւօտ հասած հեռագիրք

Տըպլին 9 մայիս.

Ոստիկանութիւնը Զապլը Մուր անուն մարդ մը ձերբակալեց, որ նոր եկած է Ամերիկայէն, եւ որ գլորտ Քէվէնտիշ եւ պ. Պուրք սպանողներէն մին լինել կը կարծուի:

Տըպլին 9 մայիս.

Երեք նոր ձերբակալութիւնք եւս կատարեցան ի Քիլտար գաւառ Իռլանտիոյ, բայց անկարեւոր կը թուին:

Լոնտրա 9 մայիս.

Ծովային գործոց նախարարութեան առաջին քարտուղար եւ խորհրդարանի անդամ Պ. Օթթօ Թրէվէլիըն Իռլանտայի նախարար անուանեցաւ, փոխանակ ըսպանեալ Լորտ Քէվէնտիշի:

Հռոմ 9 մայիս.

Երեսփոխանաց ժողովը ընդունեց Ֆրանսայի հետ կնքուած առեւտրական դաշնագիրը:

Մատրիտ 9 մայիս.

Ծերակոյտն ընդունեց Ֆրանսայի հետ կնքուած առեւտրական դաշնագիրը:

Պրուքսէլ 9 մայիս.

Պելճիքոյ Ազգային Պանքան 100 ին 1/2 աւելցուց իւր դրամագլուխը:

Ամստէրտամ (Հոլանտա) 9 մայիս.

Նախարարութիւնն հրաժարական տուաւ երեսփոխանաց ժողովոյ քուէին վրայ, որ հակառակ էր Ֆրանսայի հետ կնքուած դաշնագրին:

Նիւ Եորք 9 մայիս.

Իռլանտայի կալուածական Միութեան Ամերիկեան ճիւղին պլուխներն 5,000 տոլար վարձատրութիւն կը խոստանան Լորտ Քէվէնտիշի եւ Պ. Պուրքի մարդասպաններն երեւան հանողին համար: Հալիֆաքս եւ Մոնրէալ քաղաքաց մէջ գումարեալ Իռլանտական միթինկներ ազդուապէս պարսաւեցին Տըպլինի կրկին սպանութեան հեղինակները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Հանրային կրթութեան նախորդ նախարար Ալի Ֆուատ Պէյ տըրոյ վերատեսուչ անուանեցաւ.

Առեւտրական գործոց նախորդ նախարար Բայիֆ էֆէնտի հանրօգուտ շինութեանց ընդհանուր քըննիչ (Նաֆիա միւֆէթթիշի ումումիի) անուանեցաւ:

Երբեմն կարնոյ նախագահ ատենի ընդհ. դատախազի օգնական Աղեքսանդր էֆէնտի՝ Սեբաստիոյ կուսակալութեան առեւտրական ատենին նախագահ անուանեցաւ:

Աղեքսանդր էֆէնտի Տէր Ներսէսեան, (որդի կարնեցի Մեծ. Խաչատուր Խան էֆէնտիի) ծանօթ է բազմաց իւր ընտիր բարեմասնութեամբք, որով մեծապէս գոհ ըրած էր կարնոյ ժողովուրդն իւր պաշտօնավարութեան միջոցին:

Մայրաքաղաքիս դեսպանք այսօր շնորհաւորութեան պիտի երթան արտաքին գործոց նորընտիր նախարար Վսեմ. Սայիտ փաշային:

Նախարարական փոփոխութեանց պատճառաւ՝ մայրաքաղաքիս Ֆրանսական դեսպան Նոայլ Մարքիզն երէկ չկրցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալ: Կ'ըսուի թէ յառաջիկայ շաբաթ օրը պիտի ներկայանայ: Հոլանտական արտասովոր դեսպանութիւնն ալ յառաջիկայ երկուշաբթի պիտի ներկայանայ:

Վագըթ այսօր կը ծանուցանէ թէ Վիէննայի Օսմ. դեսպան Էտհէմ փաշա Կ. Պոլիս գալու բաղձանք յայտնած լինելով, Վեհ. Սուլթանն ընդունեց է Նորին բարձրութեան բաղձանքն, և թէ Պետական խորհրդոյ նախորդ նախագահ Սէրվէր փաշա Վիէննայի դեսպան անուանուեր է, փոխանակ Էտհէմ փաշայի:

Ռուսիոյ վճարելիք պատերազմական տուգանաց կարգադրութեան յանձնախումբը թէ և երէկ Բ. Դուռը գումարեցաւ, սակայն Սէրվէր փաշայի բացակայութեան պատճառաւ՝ չկրցաւ որոշում մը տալ. հետեւաբար այսօր վերստին պիտի գումարի: Այս խնդրոյն նկատմամբ հետեւեալ լուրերը կուտայ այսօր Վագըթ.

«Պատերազմական տուգանաց վճարման յատկացեալ հասութից վրայ հսկելու համար Ռուսական կառավարութեան կողմէ ղրկուելիք պաշտօնատարին պարտաւորութեանց նկատմամբ համաձայնութիւն գոյացած է:

«Սոյն համաձայնութեան համեմատ՝ Ելմտական Նախարարութիւնն՝ Օսմ. Պանքային պաշտօնագիր մը ղրկելով՝ արտօնութիւն պիտի տայ որ Բետրպուրկի Ռուսական Պանքային կողմէ ղրկուելիք հսկող տեսուչն ընդունի: Օսմ. Պանքան ալ այս որոշումը պաշտօնագրով մը Ռուսական դեսպանատան պիտի հաղորդէ: Վճարուելիք տարեկան գումարը պիտի լինի 350 հազար Օսմ. ոսկի:»

Երէկուան Ֆար տիւ Պոսֆորի մէջ կը կարդանք.

«Երէկ ելած կայսերական հրամանագիր մը սկզբամբ կ'ընդունի պատերազմական տուգանաց խընդրոյն կարգադրութիւնը. մանաւանդ Ռուսական հսկողութեան վերաբերեալ կէտն, ինչպէս որ Պ. Նովիքոֆի և Բ. Դրան միջեւ որոշուած է: Ռուսական դեսպանը Կ. Պոլսէն մեկնելու համար՝ վերջնական պայմանագրին ստորագրուելուն պիտի սպասէ, որոյ խմբագրութիւնն ալ բանակցութեանց առիթ պիտի տայ:»

Կայսերական կառավարութիւնը բացատրութիւն պահանջեց Հելլենական կառավարութենէն՝ Պ. Թրիքուբիսի արտասանած բանախօսութեան պատճառաւ: Բ. Դուռը մինչեւ ցարդ գոհացուցիչ չնկատեր Հելլենական նախարարութեան տըւած պատասխանը:

Արտաքին գործոց նորընտիր նախարար Սայիտ փաշա բնիկ Սիւլէյմանիէցի է, և հետեւապէս՝ Քրդազգութեան կը պատկանի: Շատ կանուխ Կ. Պոլիս գալով, պետական պաշտօնի մէջ մտած է, և իբր 10 տարի առաջ, կարսի կառավարիչ եղած է. Րումելիի կողմն ալ պաշտօններ վարած է; և վերջերս Թեսալիոյ կառավարիչ էր, երբ Պէյքըր փաշայի հետ փոքր Ասիոյ մէջ բարեկարգական հանրածանօթ պտոյտն ըրաւ:

Պատերազմական գործոց նախարարութիւնը Պրուսէլի Օսմ. դեսպանատան միջնորդութեամբ Պըրուսէլի արքունի բժշկական ճեմարանէն անդամաբուժութեան դասատու մը խնդրեց Կ. Պոլսոյ բժշկական արքունի վարժարանին համար:

Մայրաքաղաքիս Հելլենական դեսպանը Միտիլլիի մէջ բանտարկեալ Սոկրատ Անկելի անուն Հելլենացի չարագործին արձակումը խնդրեց Բ. Դռնէն: Սակայն Բ. Դուռը մերժողական պատասխան տուաւ առարկելով թէ բանտարկեալն հանրային ապահովութեան վտանգաւոր մարդ մ'էր:

Անցեալները ծանուցինք թէ Եըլտըզի կայսերական պալատան մէջ յանձնախումբ մը կազմուած է Կ. Պոլսէն մինչեւ Պաղտատ շինուելիք երկաթուղւոյն նկատմամբ Գերմանական ընկերութեան կողմէն ներկայացեալ ծրագիրը քննելու համար: Յիշեալ ընկերութիւնը կայսերական կառավարութեան կը թողու երկու գիծերու ընտրութիւնն: Առաջինն մին Նիկոմիդիայէն սկսեալ Էսկի-Շէհիրէն, Էնկիւրիէն, Սեբաստիայէն, Մալաթիայէն, Տիարպէքիրէն և Մուսուլէն անցնելով Պաղտատ կը հասնի: Երկրորդը նոյնպէս Նիկոմիդիայէն սկսեալ Էսկի-Շէհիրէն, Քէօթահիայէն, Գոնիայէն, Ադանայէն, Հալէպէն անցնելով՝ Պաղտատ կը հասնի Եփրատայ եզերքէն հետեւելով:

Յանձնախումբն այժմ յիշեալ երկու գիծերուն ընտրութեանը վրայ կը խորհրդակցի: Առաջին գիծն աւելի երկայն է և շինութեան աշխատութիւնք աւելի դժուարութեանց պիտի հանդիպին քան երկրորդին մէջ. ասկէ զատ՝ եթէ պատերազմ ծագի, թշնամին կրնայ քանի մը տեղերէ կտրել առաջին գիծը:

Քաղաքապետ Մազհար փաշա քանի մը քաղաքապետական պաշտօնատարաց հետ անցեալ ուրբաթ օրը Քեաղըտ խանէ երթալով տեղւոյն առուակին ջուրը Բէրա փոխադրելու յատկացեալ մեքենան փորձեց: Եղած փորձերը կատարելապէս յաջողեցան: Յուսալի է, կ'ըսեն Թուրք լրագիրք, որ մինչեւ յառաջիկայ ուրբաթ օրն աշխատութիւնք աւարտելով՝ ջուրը կարենայ Բէրա բերուիլ:

Ռուսական կեղծ դրամաթղթեր շինելու ամբաստանութեամբ ձերբակալեալ Բոլոնիայի քահանայն երէկ Կ. Պոլսոյ պատժական ատենին առջեւ դատուելով՝ յանցաւորութիւնը հաստատուեցաւ: Բայց ծերութիւնն և քահանայական աստիճանը նկատելով՝ պատժական ատեանը միայն երեքամեայ բանտարկութեան դատապարտեց զայն:

Թուրք լրագիրք ոստիկանութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն Տէրվէլէ մը վրայ, որ միշտ բացագըլուխ և բոկոտն Բէրայի և Ղալաթիոյ մէջ շրջելով կը մուրայ, և ձեռքը գտնուած օձերն անցորդաց ցուցնելով կը վախցնէ զանոնք:

Ղալաթիոյ աշտարակին մօտ բընակեալ Գերմանացի մը շաբաթ օրն ինքզինք սպաննեց ատրճանակի հարուածով: Այս յուսահատական գործն՝ անբուժելի հիւանդութեան մը կը վերագրուի, որով անձնասպանն երկար ժամանակէ ի վեր կը տանջուէր:

Պրուսայէն Սէլամէթ լրագրոյ գրուած նամակ մը հետեւեալ լուրերը կուտայ.

«Գաւառիս մէջ շերամի որդերն սկսան արթննալ: Բայց բազմաթիւ գիւղօրէից մէջ, ուր շերամագործութիւնը մինչեւ ցարդ շահու գըլխաւոր միջոցն էր, հունտի նուազութեան պատճառաւ հունձքն աննըշան պիտի լինի: Բազում թթենիներ կը կտրուին՝ անոնց տեղ արմտիք ցանելու համար: Ատտասերը գաղրած է. ճարոնի մէկ հոխա մետաքսն 2 Օսմ. ոսկի և 85-90 ղրուշ կ'արժէ: Տեղական վաճառականութիւնն երբէք այնքան վըդովուած չէր, որքան այսօր Օննիկ Պօտուրեան վաճառատան սնանկութեան պատճառաւ: Թէպէտեւ պարտքը 12,000 ոսկիէն աւելի չէ, բայց և այնպէս այս վճարքի դադարումը բազմաթիւ վաճառականաց մեծ վընաս կը պատճառէ, որոց հետ յարաբերութեան մէջ էր Օննիկ Պօտուրեան վաճառատունը: Վերջին օրերս տեղացած առատ անձրեւը կը յուսացնէ թէ հունձքն յաջող պիտի լինի:»

Կարինէն առնուած տեղեկութիւնք կը հաստատեն թէ Ռուսական սահմանէն հրոսախմբեր Օսմանեան հողը կ'անցնին դուար արածելու պատրուակաւ և ասպատակութիւն ու աւարառութիւն կ'ընեն:

Գասթամունիի պաշտօնական լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք.

«Զանղըրիի ընդհ. դատախազի օգնական Էմին էֆէնտի՝ դատարանին նիստերուն ժամանակ անդադար ծուխ կը քաշէ, և միշտ դատարանին անդամոց քով կը բազմի: Ամբաստանութեան ատենին կողմէ դատարանին ղրկուած ամբաստանեալոց նպաստաւոր եզրակացութիւններ կը հանէ և անոնց արձակումը կը պահանջէ միշտ: Նոյն ժամանակ նախագահը կը թշնամանէ և նախագահն ալ իւր կողմէ թշնամանքն անոր կը վերա- [illegible] ծութեան վերաբերեալ քննութիւն մ'ընելու համար, Էմին էֆէնտի Փալանճաքի գաւառակն երթալով՝ գործը լուծութեան մէջ թողեց՝ 60 ոսկի, արծաթ [illegible] մ'և ձիու արծաթապատ կազմած մը կաշառ առնելով: Այս իրողութիւնք ծանուցուեցան դատական գործոց նախարարին, և հրաման եկաւ որ նախագահն ու ընդհ. դատախազի օգնականը գաւառիս կեդրոնը կոչուին և դատաստանի ենթարկուին: Գաւառիս դատական քննիչ Ասիմ փաշա՝ այս հրամանն ստանալով՝ յիշեալ երկու պաշտօնատարներն ու վկաներն ի դատաստան հրաւիրեց:»

1882 տարւոյ Ա. գիսաւորը՝ սովորական հեռադիտակի մը միջոցաւ այժմէն կարելի է տեսնել գիշերը լուսնոյ ծագումէն առաջ: Առ այժմ իբրեւ միգամածային սարկայ մը կ'երեւի և յունիս ամսոյ մէջ երկնային կամարին ամենէն փայլուն աստղերէն մին պիտի լինի:

Արդէն ծանուցած էինք թէ Տփղիսէն Բագու (կասպից ծովու վրայ) երկաթուղի մը կը շինուի: Ըստ նորագոյն տեղեկութեանց, այս երկաթուղին յառաջիկայ յուլիս ամսոյ մէջ պիտի սկսի բանիլ: Այս կերպիւ, Պաթումէն կարելի պիտի լինի ուղղակի գծով երթալ կասպից ծովու եզերքն, և անտի շոգենաւով անցնիլ ի Բաշտ, (Պարսկաստան), Նաւահանգիստ Թէհրանի, և փոխադարձաբար:

Մոսկուայէն հետեւեալ լուրերը կը հաղորդեն Վիէննայի Բրէս լրագրին.

«Քոպոսէֆ Պոկտանովիչ անուն անձ մը՝ ելեքտրական լուսով Քրէմլինի պալատը լուսաւորելու վերաբերեալ ծրագիր մը ներկայեց կառավարութեան: Առնուած տեղեկութիւններէ հասկցուեցաւ որ այս անձ՝ կայսեր թագադրութեան հանդիսին ժամանակ՝ Քրէմլինի պալատը ամբողջապէս օդը հանելու դիտաւորութիւն ունէր: Քոպոսէֆի բնակարանին մէջ գտնուեցան բազմաթիւ գեղջկական գդակներ, որ յստակը պայթուցիկ նիւթերով լի էր: Կը կարծուի թէ կայսրն անցած ժամանակ այս գտակներն օդը պիտի նետուէին ինչպես ցնծութեան, և գետինն իյնալով՝ հրալից ռումբերու նման պիտի պայթէին: Քոպոսէֆի ձերբակալութենէն յետոյ 300 ոչնչականք ալ ոստիկանութեան ձեռքն ինկան:»

Ռուս լրագիրք կը ծանուցանեն թէ կոմս Լորիս Մէլիքոֆ այժմ Հարաւային Ֆրանսայի Նիս քաղաքը կը գտնուի, բժշկական խնամոց ներքեւ; որովհետեւ Հայազգի կոմսը շատ հիւանդ է և արիւն կը թքնէ, և բժիշկները վտանգաւոր կացութեան մը մէջ կը տեսնեն զայն:

Այս պատճառաւ է անշուշտ որ կոմս Լորիս Մէլիքոֆ տակաւին չէ կրցած երթալ Բետրպուրկ, ըստ հրաւիրանաց Աղեքսանդր Գ. կայսեր:

Թայմզ լրագրոյն Կ. Պոլսոյ թղթակիցն հետեւեալը կը հեռագրէ ապրիլ 30 թուով. — «Պուլղարիոյ մէջ քաղաքական յուզումն օր ըստ օրէ կը սաստկանայ: Սահմանադրականք մասնախմբեր կազմած են գրեթէ բոլոր քաղաքաց մէջ, և կը պատրաստուին մեծ միթինկ մը գումարելու ի Սոֆիա, յորում պատգամաւորութիւնք ներկայ պիտի գտնուին այդ տեղական մասնախմբոց կողմէ: Եթէ միթինկը տեղի ունենայ, որոշումներ պիտի քուէարկուին խնդրելով պատասխանատու նախարարութեան մը կազմութիւնն, Ազգային ժողովոյ մը գումարումն, և ի մի բան, անմիջական վերադարձ սահմանադրական կանոնաց: Ըստ որում իշխանն յայտարարած է թէ նախապատիւ կը համարի հրաժարիլ քան թէ փափաքուած զիջումներն ընել, իրեն յաջորդ ընտրելու խնդիրը կրկին կը յուզուի. շարժման գըլուխ կանգնող անձինք հաւկնալով որ իրենց յաջողութիւնը կամ ձախողութիւնը Ռուսիոյ ընթացքէն կախում ունի, կ'ուզեն Ռուսական համակրութիւն և աջակցութիւն ստանալ յայտարարելով որ, եթէ իշխանն հրաժարի, Ռուս մը պիտի ընտրեն անոր տեղ: Մոտերս ի Սոֆիա մասնաւոր միթինկի մը մէջ այլ և այլ ընտրելեաց վրայ խօսք եղած է. Աղեքսանդր Պադդէմպէրկ իշխանին յաջորդելու համար Իգնատիէֆ զօրավարին, Տոնտուքոֆ Քորսաքոֆ իշխանին և (Համալսարանաց պաշտօնական գլուխ) Պ. Աքսաքոֆի անունները տրուած են, իբրեւ Պուլղարական ազատութեան գործին մասնակցած անձինք. բայց մտածուած է թէ ասոնցմէ ոչ մին կրնայ ստանալ Աւստրիոյ և արեւմտեան տէրութեանց հաւանութիւնն: Յայնժամ Խմէրիթինսքի (Ռուս) իշխանին անունը տրուած է, որ աւելի յուսալից ընտրելի մը կը նկատուի. զի թէպէտ երեւելի դեր մը կատարած է վերջին պատերազմին մէջ և Սլաւական համակրութիւններ կը սածէ, բայց երբէք Համայնական մեքենայութեամբք կամ յեղափոխական բանխօսութեամբք չէ գայթակղեցուցած Եւրոպան: Թէպէտ Սոֆիայի Սահմանադրականք այսպէս ազատաբար կը քննեն իշխանին համար յաջորդի մը խնդիրը, բայց կը յուսան թէ հրաժարման առաջքը կ'առնուի զիջումներով, և իրօք պատրաստ են միջին կարգադրութեան մը գալու: Բայց այսպէս չեն Ծայրայեղք, որոց կեդրոնն է Արեւելեան Րումէլիի մէջ, և որք իշխանը տապալելու կ'աշխատին իրենց Մէգալիզինոթի թերթով և ամէն միջոցներով: Պուլղարիոյ իշխան լինելու համար անոնց ընտրելին է Ալէքոյ փաշան (Վողորիտես իշխան) որ սահմանադրական Պետի մ'ամեն յատկութիւնները ցուցած է, դիւրաւ առաջնորդուելով քան զինքն աւելի ձեռնհաս անձերէ:»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երուսաղեմայ Ս. Պատրիարքն այսօր փոխադարձ այցելութեան գընաց Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին ի Խասգիւղ:

Ատենապետաց դիւանը վաղ առաւօտ Ղալաթիոյ մատենադարանն ի նիստ պիտի գումարի Վարչութեան անդամոց հետ:

Պատրիարքական փոխանորդ հայրը Սեբաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի հետ Եղեռնադատ ատենի նախագահ Սուրուրի էֆէնտիին այցելութիւն մը տըւաւ երէկ:

Զմիւռնիոյ Արշալոյս Արարատեան կիսամեայ թերթին ապրիլ 24ի վերջին թուոյն մէջ հետեւեալ մանրամասնութիւնները կը կարդանք Երուսաղեմայ Ամեն. Տ. Եսայի Պատրիարքին յիշեալ քաղաքն այցելութեան վրայ.

«Երէկ առաւօտ Աւստրիական շոգենաւն Օսմանեան դրօշակ պարզած մտաւ ի Զմիւռնիա. բերելով զՆորին Սրբազնութիւնն ի նաւահանգիստս, ուրանոր գտնուող կայսերական շոգենաւն անմիջապէս Օսմանեան դրօշակաւ ողջունեց ըզգալուստ Նորին Սրբազնութեան, և յատուկ պաշտօնեայ մի գալով յայտնեց թէ կայսերական շոգենաւուն պաշտօնական նաւակն Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրամանին ներքեւ դրուած է. և Նորին Սրբազնութիւնն իւր շնորհակալութիւնն յայտնեց:

«Մեր Գեր. Առաջնորդ Ս. Մելքիսեդեկ Տ. Հայրն քահանայից և Ազգային վարչութեան ներկայացուցիչ անդամովք փութայ ի շոգենաւն, ուր քաղաքիս՝ Ս. Երուսաղէմի գործակալ Մեծ. Գէորգ Սուլթանեան կանխած էր Նորին Սրբազնութիւնն ողջունելու: Սրբաշուրջ եղաւ մեր Գեր. Ս. Առաջնորդի՝ ընդ Ամեն. Ս. Պատրիարքին՝ իւր հոգեւոր ծնողին հետ գորովալից գրկախառնութիւնքն: Մեծ. Ազգայինք դիմեցին ի շոգենաւն, և խուռն բազմութիւն անհամբեր կ'սպասէին ի նաւամատոյցն:

«Մեծ. Մ. Յակոբ և Մ. Ստեփան եղբարք Եսայեան փափաքելով ընդունիլ զՆորին Սրբազնութիւնն յատուկ հրաւիրակ ղրկած էին ի շոգենաւն և իւրեանց սեպհական կառքն ի նաւամատոյցն: Նորին Սրբազնութիւնն ընդ Գեր. Ս. Առաջնորդի մեր և Մեծ. Ազգայնոց ուղղեցաւ Մեծ. Եսայեան եղբարց քարափանց վրայի նորաշէն հոյակապ ապարանն, ուր մինչեւ իրիկուն ընդունեց իւրեն մատուցուած համակրական այցելութիւնքն:

«Այս առաւօտ Նորին Սրբազնութիւնն Սուրբ Ստեփանոս եկեղեցին աղօթելէ զկնի այցելութիւն ըրաւ յԱզգային հիւանդանոցն, Մեսրոպեան վարժարանն, յԱզգային Առաջնորդարանն, ուր՝ ինչպէս ծանուցած եմք, առժամապէս զետեղուած են աշակերտուհիք, և ամեն տեղ համակրալից յորդորներ և հայրական օրհնութիւն տալով վերադարձաւ ընդ Գեր. Ս. Առաջնորդ Հօր ի տուն Մեծ. Եսայեան եղբարց, և զկնի ճաշուն, օրհնելով իւր պատուական սրտակիցներն և Զմիւռնիոյ համայն ժողովուրդն վերադարձաւ ի շոգենաւն որ մեկնի այսօր ի Պոլիս:»

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վերջին թղթատարով Անգլիայէն մեզ գրուած նամակներ մի նոր խնդիր կը ծանուցանեն ։ Հայոց մէջ Անգլիական Եկեղեցին մտցնելու մասին ջանքերն ընդհանրապէս կարծուածէն աւելի որոշ ձեւ մը ստացած լինել կը թուին ։ Նորագոյն տեղեկութիւնք չեն հաստատեր Բերայի Անգլիական Քարոզիչ Գ․ Փրքինի բայորոշ յայտարարութիւնը թէ Անգլիացիք կրօնական ծաւալում չեն ըներ Հայոց մէջ ։ Ընդհակառակն, Այնթապի Մկրտիչ եպիսկոպոսն Անգլիական եկեղեցւոյն յարած լինելով մի քանի տարի առաջ, այժմ Անգլիայի եկեղեցականք, ընդ առաջնորդութեամբ Անգլիոյ Եկեղեցւոյն գերագոյն պետին՝ Քէնդրպըրիի Արքեպիսկոպոսին, կ'աշխատին այժմ տալու այս շարժման, գումարումներ կ'ընեն, ատենակներ կը հրատարակեն, դրամ կը հաւաքեն, պատուիրակներ կը ղրկեն ի Փոքր Ասիա և ի Հայաստան, և կը յաջողին յատուկ հրամանագրով (ֆէրմանով), կայսերական կառավարութեան ճանչցնել տալ Հայ—Անգլիական եկեղեցին իբրև առանձին հասարակութիւն, և Այնթապի մէջ իրենց ծախուք և իրենց անուամբ գնուած գետնին վրայ Հայ—Անգլիական եկեղեցւոյ շինութիւնը յառաջ կը տանին ։

Այս շարժման պաշտօնական անունն է «Բարեկարգութիւն Հայոց Հին Եկեղեցւոյն մէջ»։ Աւելորդ է յիշեցնել թէ «բարեկարգութիւն» Բողոքականութիւն կը նշանակէ եւրոպական բառով, և՝ ներկայ պարագային մէջ՝ Անգլիական Բողոքականութիւն ։ Գործը վաւերական ձեւ մը տալ ներկայացնելու համար Անգլիական ժողովրդին, Անգլիացի եկեղեցական Գ․ Դրիսդըրէմ՝ կանոնիկոսին պտոյտ մը կատարել տրուած է Փոքր Ասիոյ քանի մը տեղերն, և անոր մի նամակաձև Տեղեկագրոյն մեծ կարևորութիւն տրուած լինել կը թուի ։ Խնդրոյն պատմութիւնն աւելի կատարեալ կերպիւ կը պարունակեն Անգլիայէն մեզ հաղորդուած մի քանի պաշտօնագրեր, որոց թարգմանութիւնն իբրև տեղեկութիւն մեր ընթերցողաց ներկայացնել՝ առաջին պարտականութիւն մը կը համարինք։

«ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՀԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ»

Նամակ Դրիսդրէմ կանոնիկոսի

Տեղեկագիր հրամանաւ

ՔԷՆԴՐՊԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Անտիոք, ի Սուրիա,
27 յունիս, 1881

«Մեծարգո Արքեպիսկոպոս․

«Հարաւային Հայաստանի գլխաւոր մասանց վրայ պտոյտս ամբողջացուցած լինելով, Ձեր Սրբազնութեան առաջարկութեան համեմատ Տեղեկագրով մը ահա կը ներկայեմ զոր ինչ տեսայ և լսեցի այդ երկրի մէջ, վերաբերմամբ Բարեկարգական Շարժման որ տեղի կ'ունենայ Հայոց Հին Եկեղեցւոյն մէջ ։ Դժուար է ինձ գրել այնպէս որ չափազանցեալ չթուի, բայց կրնամ ըսել թէ իրականութեան կէսն իսկ յայտնուած չէր ինձ, թէ Արքեպիսկոպոս Մկրտիչ ստուգիւ չափազանցութիւն չէ ըրած իւր դատը բացատրած ատեն, և թէ քաղաքաց և գիւղօրէից մէջ հաւաստապէս՝ քաղելու համար պատրաստ հունձք ունինք, զոր մեք չէինք ցանած ։

«Մի քանի օր կեցայ յԱյնթապ, ուր Արքեպիսկոպոս Մկրտչի եկեղեցին շինուելու վրայ է, հետս ունենալով Պէյրութ հաստատեալ Ցանիմարքայի փոխ ճարտարապետ մը, որ յատակագծէն և շինութեան կերպէն կատարելապէս գոհ եղաւ, ըսելով թէ ծախք եղած 600 Անգլ․ ոսկւոյ գումարն արդարացնելու չափով գործ արդարև կատարուած էր ։ Եկեղեցին նուիրուած է «Ս․ Գրիգոր Լուսաւորչի» անուան, և Հայկական հնագոյն եկեղեցեաց շինութեան ձեւն ունի ։ Պատերը դրեթէ աւարտած են, և տանիքը քարաշէն գմբէթ մը պիտի ունենայ ։ Արքեպիսկոպոս Մկրտչի ժողովրդեան արդի թիւն 300 հոգիէ աւելի է, որք հիւղականման խեղճ շէնքի մը մէջ կը կատարեն առ այժմ իրենց եկեղեցական պաշտօն ։ Անոնք կը գործածեն և շատ կը յարգեն «Քրիստոնէական գիտելիք ծաւալելու պաշտօն ունեցող Անգլիական Ընկերութեան» տպած Աղօթագրքերն ։ Ամենն ալ Այնթապի Հայոց ամենէն աղքատ և խեղճ դասուն կը վերաբերին, բայց տեսայ մի քանի հարուստ Հայեր, որք կ'ըսէին թէ անմիջապէս պիտի միանան Բարեկարգեալ եկեղեցւոյն, երբ վերջնականապէս կազմակերպուի ։

«Ի Մարաշ, որ 35,000 բնակիչ ունի, որոցմէ 16,000ն Հայ, կայ 1,000 հոգիէ աւելի (Բողոքական) ժողովուրդ մը, որք իրենց յատուկ դպրոց և հովիւ ունին տասներկու տարիէ ի վեր, և մեր ժամագիրքը կը գործածեն ։ Հովիւն, որ բարեկիրթ անձ մ'է, Կ․ Պոլսոյ Ռօպէրդեան վարժարանին մէջ ստացած է իւր դաստիարակութիւն, բայց (Ամերիկացի) փոխանորդներէն ձեռնադրուիլ չուզեց, և ինք և իւր հօտ անկախ են Ամերիկայի միսիոնարներէն ։ Նա կը փափաքի Հայոց (Անգլիական) Եպիսկոպոսական եկեղեցիէն ձեռնադրուիլ ։ Խօսեցայ Ամերիկացի Միսիոնարաց, բացատրելով թէ ամենևին նպատակ չունինք իրենց հակառակորդ հանդիսանալու, և ապահով եմ թէ Երուսաղէմի (Անգլիական) Եպիսկոպոսը պիտի տայ խնդրուած կարգը ։ Մարաշի այս Հայ Բողոքականք արդէն գետին մը գնած են եկեղեցի մը կանգնելու համար, և դրամ կը հաւաքեն շինութիւնն ի գլուխ հանելու նպատակաւ ։ Իրենց պաշտամանց մէջ, զոր բացօթեայ տեղ մը կը կատարեն, քարոզ տուի, 2,300 հոգւոյ ներկայութեան ։ Ադիամանի մէջ, մի Հայ քահանայ արտաքսուած էր Ս․ Գիրքը Թուրքերէն կարդալուն համար, և ինք և 30 ընտանիք յարեցան Մկրտիչ Արքեպիսկոպոսի Բարեկարգեալ Եկեղեցւոյն ։ Անոնք սենեկի մը մէջ կը կատարեն իրենց եկեղեցական պաշտօն, և քահանայն ինք կը ճարէ իւր օրական ապրուստ ։ Շատ ուշ գրաւեց իւր միամիտ եռանդ ։ Ի Քարբերդ, Ղազար (՞) քահանայն և 300 ընտանիք Բարեկարգեալ (Անգլիական) եկեղեցւոյ ժամագիրքը կը գործածեն, և սակայն կը խնդրեն քարոզիչ մը, որովհետև Ղազար քահանայն անկարող է քարոզչութեան։ Ասոնք դեռ վերջնականապէս չեն թողած Հայոց Հին (Լուսաւորչական) Եկեղեցին ։ Ի Սեվէրէկ, քահանայ չկայ գործին մէջ․ բայց իբր 100 ընտանիք յարած են Բարեկարգեալ եկեղեցւոյն ։ Տիարպէքիրցի Գ․ Կարապետ մերթ ընդ մերթ հոն կ'երթայ երկու խորհուրդները (Մկրտութիւն և Հաղորդութիւն) կատարելու ։ Այտընի մէջ, մի քահանայ և աւելի քան 100 ընտանիք կը փափաքին միանալ այս շարժման, և գրքեր ու քարոզիչ մը կը խնդրեն ։ Ալպստանի մէջ (Զէյթունի կողմն) 104 ընտանիք Բարեկարգեալ Հայոց (Անգլիական) եկեղեցին մտած են ։ Քահանայ կամ հովիւ չունին, բայց եղբարք իրենց մէջ կ'աղօթեն և կը քարոզեն կիւրակէ օրեր ։ Ասոնք ալ պաշտօնեայ մը կը խնդրեն ։ Յիշատակելի պարագայ մ'է որ հոս Ամերիկացի Միսիոնար կամ բնիկ Բողոքական հովիւ չկայ ։ Ի Սեբաստիա, իբր 100 անձինք կը գործածեն մեր Աղօթագրքեր ։ Ի Քէսապ (3,000 Հայ բնակիչներով), 25 ընտանիք և յոյժ ծերունի քահանայ մը արդէն յարած են այս շարժման (Անգլիական եկեղեցւոյն), և 240 ընտանիքներ ալ պատրաստ են միանալու, եթէ պաշտօնեայ մը գայ ։ Ամենքն ալ աղքատ են ։ Ասա և Հայ կաթոլիկ հասարակութիւն մը կայ ։ Վարդապետը, Նիքօլա (Նիկողայոս) Պօճեանեան անուն, չուզեց ընդունել Պապական Անսխալութեան վարդապետութիւնն, (Հակահասունեան էր ըսել կ'ուզէ թերևս,) և ճիզուիտական մեքենայութեանց շնորհիւ բանադրեցաւ ։ Այժմ ազատ է, և Լիբանան կը գտնուի ։ Եկեղեցին գոց է, և իւր բոլոր հօտ կ'ուզէ միանալ Բարեկարգեալ (Անգլիականացեալ) Եկեղեցւոյն ։ Ինք իսկ գիմեց Երուսաղէմի (Անգլիական) Եպիսկոպոսին, պաշտօնապէս ճանչցուելու համար ։ Ի Հալապալիէ, 200 Հայ ընտանիքէ 20ն յարած են այս շարժման, և 40 ընտանիք ալ փափաք կը յայտնեն անոնց միանալու ։ Օրուան մը ճամբայ տեղ պատգամաւորութիւն մը ղրկեցին ինձ, Հայ եկեղեցականի մը առաջնորդութեամբ, (Անգլիական) պաշտօնեայ մը և Աղօթագրքեր խնդրելով։ Տեղւոյն Հայ քահանայն չուզեր մկրտել այս շարժման յարողներու զաւակներն, և ուզեցին որ ես երթամ իրենց քով ։ Չկրցի հաւանիլ, բայց իմ տեղ, Կիպրոսի եկեղեցական պաշտօնեայ Գ․ Կարապաչեան ղրկեցի, որ մօտերը կը գտնուէր ։ Այս (Անգլիական եկեղեցւոյն յարելու) շարժումն այնչափ ընդարձակածաւալ է, որ չգտայ Հայաբնակ տեղ, մեծ լինի թէ փոքր, ուր այդ շարժման յարողներ չգտնուին ։ Գիւղ մը, ուր գիշերն անցընելու համար մնացած և հիւրընկալութիւն խնդրած էի, նոյն յարկին տակ՝ առտուն արթննալուս՝ տեսայ երիտասարդ մը, որ տան մէկ անկիւնը քաշուած մեր Աղօթագիրքը կը կարդար, և քննելով գտայ որ, թէպէտ Հայ, իրենք կը գովէին մեր Աղօթագիրքը ։ Ուրիշ գիւղ մը, գիս սազանդարական անձն խնամելով որ Անգլիացի եմ, ըսաւ անմիջապէս թէ ուրեմն եղբայրակից ենք, և հանեց ցոյց տուաւ ինձ իւր Թուրքերէն Աստուածաշունչ և երկու Աղօթագրքեր ։ Միևնոյն ժամանակ, ինձ նամակ մը գրել տուաւ, ուղղեալ առ Մկրտիչ Արքեպիսկոպոս, 20 օրինակ Աղօթագիրք խնդրելով գիւղացւոց գործածման համար, ըսելով թէ գինն յօժարակամ պիտի վճարեն ։ Եւ այս գիւղ ութ աւուր ճամբայ հեռի է Այնթապէն ։

«Այս ամեն յիշուած տեղերու մէջ, (Անգլիական Եկեղեցւոյն յարելու) շարժումն՝ Հայոց Հին Եկեղեցւոյն անդամոց մէջէն էր ։ Խնամով զգուշացայ՝ արդէն Ամերիկացի Միսիոնարաց յարելով Բողոքականութիւն ընդունողներն այս շարժման հրաւիրելու գաղափարէն, և մի քանի Ամերիկացի Միսիոնարք ալ խոստովանեցան ինձ թէ Մկրտիչ Արքեպիսկոպոսի հօտն Հայոց Հին Եկեղեցիէն բաժնուողներէ միայն կը բաղկանայ, և ո՛չ թէ իրենց հօտէն ։ Բայց այս փափաք վասն Բարեկարգութեան, (վասն Անգլիական Բողոքականութեան), յերեւան կուգայ ո՛չ միայն ի բուն Հայաստան, այլ և Միջագետաց մէջ կը յուզէ եկեղեցիներն։ Տեսայ որ մեր Աղօթագիրքը կը յարգուէր և կը գործածուէր թէ՛ Հայոցմէ և թէ՛ Ասորւոցմէ, յՈւրֆա, 30,000 բնակիչներով, ի Տիարպէքիր Տիգրիս գետի վրայ, և ի Մուսուլ ։ Երուսաղեմայ Եպիսկոպոսին օգնութեան համար եռանդագին հրաւէրներ ստացած է այդ քաղաքներէ, և ես ինքս Միջագետաց կողմը խօսակցեցայ Հայ և Ասորի քահանայից հետ, որք ուղղութիւն մը կը խնդրեն, և Բարեկարգութեան մը պէտքն ընդունելով համդերձ, կը հարցնեն․ «Ո՞վ պիտի սկսի»։ Եդեսիոյ բնիկ հովիւն, որ բարեկիրթ և բարեպաշտ անձ մ'է, մեծ փառաւորութեամբ կը խօսէր Բարեկարգութեան շարժման վրայ, և կ'ըսէր թէ Հին Եկեղեցւոյ անդամ ամեն 100 Հայէ 80ն այժմ Աստուածաշունչ ունին և կ'ընթեռնուն ։ Նա կը հաւատար թէ Բարեկարգութիւնն, եթէ Հայոց ձեռամբ կատարուի, Հայոց կարգերով և Հայ ազգային ուղղութեամբ, սերունդեան մը ժամանակամիջոցի մէջ (այսինքն 25—30 տարիէն) բոլոր Ազգին վրայ պիտի տարածուի, և այսպէս ամենը վերջապէս պիտի միացնէ ազգային մէկ Հին Բարեկարգեալ Եկեղեցւոյ մէջ ։ Իմ քննութիւնս ալ կը հաստատէ զայս, ո՛չ միայն Միջագետաց, այլ բոլոր երկրին նկատմամբ, շնորհիւ երկարատև աշխատութեանց Ամերիկայի Միսիոնարաց և Աստուածաշնչոյ Ընկերութեան ։ Ի Տիարպէքիր բնիկ Հայ եկեղեցական մը կայ, Գ․ Կարապետ, զոր (Անգլիացի) կոլատ Եպիսկոպոսը ձեռնադրած է ։ Նա 15 ընտանիք ունի իւր հօտէն խնամոց ներքեւ, բայց բոլորովին անօգնական մնացած է կոլատ Եպիսկոպոսի մահէն հետէ, և փոքրիկ դպրոցի մը վարժապետութիւնն ընելով խեղճ ապրուստ մը միայն կրնայ հայթայթել ։ Ի Տիարպէքիր կայ նաև բազմաթիւ Բողոքական ժողովուրդ մը, բնիկ հովուի մը ներքեւ, իբրև պտուղ նախկին Ամերիկեան Միսիոնարութեան ։ (Հանրածանօթ) Պատուելի Թովմաս (Պօյաճեան) մեր Աղօթագիրքը կը գործածէ ։ Կը ցաւիմ որ նա Կ․ Պոլիս էր մինչ ես կը շրջէի այս կողմեր ։ Ի Մուսուլ ունինք փոքրիկ հօտ մը, 17 ընտանիքէ բաղկացեալ, անդամք Բարեկարգեալ Եկեղեցւոյ, հնոյն Նինուէի աւերակաց մօտ ։

«Կը վախնամ որ այս մանրամասնութիւնք ձանձրութիւն պատճառեն Ձեր Սրբազնութեան, բայց չգիտեմ թէ ուրիշ կերպիւ ի՞նչպէս կարելի է լաւ գաղափար մը տալ այս զարմանալի շարժման վրայ ։ Ինչ որ ամենէն աւելի կ'ապշեցնէ զիս, այն համբերատար հաստատամտութիւնն է որով այս ժողովուրդք սպասած են, մինչև իսկ տասն երկու տարեայ երկար ժամանակէ մ'ի վեր, ուսուցիչներ խնդրելով, և սակայն, առանց բառ մը քաջալերութիւն ստանալու մեզմէ, հաւատարիմ մնացած են իրենց սկզբանց ։ Ամերիկեան Միսիոնարք իրենք իսկ, որոց ինձ նկատմամբ բարեխոհութեան և հիւրընկալութեան վրայօք ո՛րչափ և երախտագիտութեամբ խօսիմ քիչ է, խոստովանեցան ինձ թէ Անգլիոյ Եկեղեցին այլ կերպ չկրնար վարուիլ, բայց եթէ անսալ պիտի հրաւէրի մը, զոր ինք չէր փնտռած ո՛չ մի կերպիւ և որ Աստուծոյն նախախնամութեամբ և եթ կ'ուղղուի իրեն ։

«Կը թուի ինձ թէ ժամանակ չկայ կորսնցնելու, զի հունձքը հասուն է լիովին, և եթէ երբեք կրնանք կարդալ Նախախնամական կոչման նշաններն, այն հոս է ստուգիւ, ուր Աստուծոյն Հոգին կը յուզէ չոր ոսկրներն առանց մեր գործակցութեան, այլ պարզապէս Ս․ Գրոց շրջաբերութեամբ ։ Անմիջապէս պէտք եղածն այս է որ երկու (Անգլիական) եկեղեցականք ղրկուին, մին Մկրտիչ Արքեպիսկոպոսին հետ Այնթապ կենալու և այդ կեդրոնատեղւոյն կազմակերպութեան օգնելու համար, միւսը շրջուն քարոզչի պաշտօնը վարելու, գիւղերն այցելելով և բարեկարգեալ հօտին խնամք տանելով, ուր որ բարեկարգեալ Հայ քահանայ չկայ կամ չէ կարող քարոզել։ Այս երկրորդը պատրաստ ունինք, յանձին Գ․ Կարապաչեանի, որ Հայ մ'է և Քեմպրիճի Համալսարանէն (քոյր Օքսֆորդի Համալսարանին, Անգլիա,) վկայական ստացած է բարձրագոյն պատուով, և որ թէև «Անգլիական գաղթականութեանց և Եւրոպիոյ Անգլիական եկեղեցեաց հոգևոր պէտքերն հոգալու պաշտօն ունեցող Անգլիական Ընկերութեան» կողմէ Կիպրոս կղզւոյն մէջ եկեղեցական պաշտօնի մը կոչուած էր, բայց դրամի պակասութեամբ իւր այս գործէն ետ դարձած լինելով, այժմ կը փափաքի իւր հայրենակաց մէջ գործել ։ Գ․ Կարապաչեան կարող է Հայերէն, Թուրքերէն և Արաբերէն լեզուօք քարոզել, և ապահով եմ թէ մեծ սիրով մը կը լինի անոնց պաշտօն թողուլ այդպիսի անձ մը ։ Միւս եկեղեցականին համար, որ Այնթապ պիտի կենայ, սոյն լեզուաց ծանօթութիւնն հարկաւոր չէ ի սկզբան, և անմիջապէս օգտակար լինելով հանդերձ Մկրտիչ Արքեպիսկոպոսին, կրնայ տակաւ առնել իրեն պէտք եղածին չափ Թուրքերէն ։

«Ձեր փառաց կրնամ հաւաստել թէ, եթէ կրօնական այս զարմանալի շարժումն ի Հայաստան ծանօթ լինէր յԱնգլիա, պէտք եղած գումարներն անմիջապէս պիտի ղրկուէին, և չեմ կարծեր թէ կը չափազանցեմ, ենթադրելով որ տարին 1,000 Անգլ․ ոսկւոյ գումար մը դիւրաւ կրնայ հաւաքուիլ Արքեպիսկոպոս Մկրտիչի համար, և ընդ նմին երեք քարոզ-

---

ԹԵՐԹՕՆ ՄԱՍԻՍԻ

(7)

ԿԷՕԹԷ

ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

ՎԷՊ ՅԻՆՆ ԵՐԳՈՎ

ԵՒՏԵՐՊԷ

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Այսպէս խօսակից կը լինէին արքն ։ Նոյն պահուն կ'երթար մայրն ի խնդիր որդւոյն՝ նախ տանն առջև, քարեղէն նստարանին վերայ ուր սովոր էր նստիլ, և չգտնելով անդ՝ կ'երթայր նայել ախոռին մէջ․ թերևս անդ լինէր զբաղեալ ի դարման ազնիւ աշխատաւոր երիվարացն որք մտրուկ էին երբ գնեց զնոսա և որոց ոչ ումեք կը հաւատայր խնամքն ։ Եւ ըսաւ ծառան․ Պարտէզ գնաց ։

Յայնժամ արագոտն կտրեց անցաւ կրկին երկայնաձիգ գաւիթներն, յետոյս թողուց ախոռներն և ամբարաշէն շտեմարանքն, մտաւ ի պարտէզն որ կը ձգէր մինչ ի պարիսպս քաղաքին, կտրեց անցաւ և ընդ այն, և զմայլապարհայն կը հրճուէր տեսնելով ուռճացեալ անդնիւր ամէն, կը վերուղղէր խնձորենիներն որոց վերայ կը հանգչէին խնձորենւոյն ծանրաբեռն ոստերն, որպէս և պտղալից վայրահակ ճիւղք տանձենւոյն, ի բաց կ'առնէր առ բաղ մի քանի թրթուրներ կորովի ուռուցիկ կաղամբէն, զի գործունեայ կին մի չառնու մի քայլ անօգուտ ։

Այսպէս հասաւ նա ի ծայր երկայնաձիգ պարտիզին՝ մինչ ի հովանոցն այծի տերևոց յարկածածուկ․ անդ եւս չգտաւ զորդին, և իւր հայեցուածք ի զուր խնդրեցին զնա բովանդակ միջոցին մէջ ընդ որ անցած էր ։ Բայց կիսաբաց էր դռնակն այն, զոր հովանոցէն դուրս քաղաքին պարսպին մէջէն մասնաւոր շնորհիւ ճեղքած էր երբեմն ընտանեաց պապերէն մին, մեծայայ քաղաքապետ ։ Դուրս ելաւ, և անցաւ չոր ցամաքեալ խրամէն անդին, ուր յեղը պտղատուին կը բարձրանայր անմիջապէս ցանկապատ այգեստանն զառիվեր շաւղով, արեւդէմ ։ Ելաւ շաւղէն ի վեր, և ի դընացին կը բերկրէր ընդ առատութիւն ողկուզոց խաղողոյ որք հազիւ կը ծածկուէին տերևոց տակ ։ Բարձանց վերայ, ի միջավայրի, կար սարփինայ հովանոց ուր կ'ելնէին անտաշ քարէ աստիճաններով ։ Անդ կը կախուէր անուշ սպիտակ խաղողն, և առ նմին մշկահոտ կարմիր-կապոյտ՝ տարօրինակ խոշորութեամբ, ամենն խնամով մշակուած՝ հիւրոց աղանդերներուն ի զարդ ։ Մնացորդն այգեստանին կը ծածկէին մեկնակ որթատունկեր փոքրագոյն ողկոյզներով, յորոց կ'ելնէր գինին պատուական ։ Կը հրճուէր յառաջագոյն խորհելով մրգահաս աշնան վերայ և այն տօնական աւուր յորում ողջոյն մարգն երգ ի բերան խնդագին կը քաղէ խաղողն, կը ճմլէ հնձանին մէջ և խաղողոյ կը լինի կարասներն, և յերեկոյին պատեհական հրոյ խաղք կը շաչեն կը ճայթեն լուսափիւռ ամենուրեք ի պատիւ գեղեցկագունին ի հունձս ։

Սակայն կ'երթայր նա սրտատանջ անհանգիստ յորմէ հետէ երկիցս և երիցս իսկ կոչեց իւր որդին և արձագանգն միայն պատասխանեց նմա բազմաձայն, արձագանգն շատախօս, հնչելով քաղաքին աշտարակներէն ։ Այնքան անսովոր էր իւրեն որդւոյն․ երբե՛ք չաս հեռանալն ի խնդիր ենել չէր երթայր, կամ կ'ազդարարէր նմա յառաջագոյն որպէս զի մի՛ գուցէ՝ դժբախտ արկած մի խորհելով՝ կասկածանօք և հոգոց մատնուի գորովագութ մայրն ։ Բայց կը յուսայր տակաւին պատահել նմա, զի յետին դուռն այգեստանին բաց էր նման առաջնոյն ։

Եւ մտաւ այն արտին մէջ որ լայնածաւալ կը ծածկէր բլրոյն կռնակն ։ Միշտ իւր սեպհական հողոյն վերայ էր, և ուրախութեամբ կը նայէր սերմն ի տես հասկածաղկեալ ցորենոյն որ կը շարժէր հովմածածան վէտ ի վէտ անդաստաններն մէկ ծայրէն ցմիւսն ։ Այս եզրերը անդոց, կ'երթայր մի նուրբ շաւղէ, աչքն յառած ի մեծ տանձենին որ կը կանգնէր մի բլրոյ վերայ, սահման իւր տան կալուածոց։ Ո՞վ տնկած էր զայն՝ ո՛չ ոք գիտէր․ ամենուստ կը տեսնուէր, և գերահռչակ էին իւր պտուղք ։ Այս ծառոյն տակ միջօրէին իւրեանց ճաշն կ'առնուին արտահունձք զուարթութեամբ, և նորա շուքին տակ կը նստէին անդէորդք․ բազմոցք էին անդ քարեղէն և մամռայէն ։

Եւ չէր խաբուած իւր յուսոյն մէջ․ անդ նստած էր իւր Հերմանն․ կը հանգչէր գլուխ յեղ ի բազուկ, և կը թուէր նկատել հեռուն այն լեռներն որք երկնի ծիրն կը կազմէին․ կռնակն իւր մօր դարձուցած էր ։ Յուշիկ մերձեցաւ առ նա, և մեղմիվ շարժեց նորա ուսն ։ Յետակոյս դարձաւ իսկոյն որդին, և մայրն տեսաւ զի արտասուալից էին նորա աչուիք ։

Մա՛յր, ըսաւ ափշեալ, յանկարծակի ըմբռնեցիր զիս ։

Եւ կը ջնջէր արագ արցունքներն, արտայայտութիւն ազնուական զգայմանց երիտասարդ սրտոյ ։

Ի՛նչ, որդեա՛կ իմ, կուլա՞ս, ըսաւ մայրն սրտայոյզ, կարծես թէ նոյն Հերմանն չես․ երբե՛ք դեռ այս վիճակին մէջ չեմ տեսած ։ Ըսէ՛, ի՛նչ բան սիրտդ կը ճնշէ․ ի՞նչ բան կը դրդէ զքեզ գալ նստիլ առանձինն այս տանձենւոյն տակ․ ի՞նչ բան արցունք կը հանէ աչքերէդ ։

Եւ ազնիւ երիտասարդն ամփոփեց ինքզինքն ու ըսաւ ։

Արդարև չունի սիրտ իւր ողջ գնձերոյ կրծոց մէջ նա որ անզգայ կը մնայ մարդկային թշուառութեան, պանդխտականաց աղէտից առջև․ խելք չունի իւր գլխոյն մէջ նա որ անփոյթ և անտարբեր է իւր անձին և հայրենեաց բարւոյն ։ Ինչ որ տեսայ այսօր և լսեցի՝ շարժեց սիրտս․ ուստի և դուրս ելայ մինչև և շրջեցուցի աչերս հիանալի և լայնանիստ շինամայրաց վրայ զորս կը պարուրեն շուրջանակի պտղաւէտ բլուրներ, ոսկեգոյն հասկաց վերայ որք արդէն կը խոնարհին որայից առջև, և կը խոստանան առլինաշատ աշուն և ակադձուն ամբարներ ։ Բայց, աւա՜ղ, ո՛րչափ մօտ է թշնամին։ Հռենոսեան ալիք կը պաշտպանեն զմեզ արդարև․ բայց ի՞նչ են արդ ալիք և լերինք այն ահարկու ժողովրդեան առջև որ մրրկանման կը մերձենայ․ որ ամենուստ կը համախմբէ երիտասարդներն ու ծերերն և կ'ընթանայ յառաջ բուռն և մեծագոռ, և այդ ամբոխն չգիտէ երկնչիլ ի մահուանէ․ ամբոխ զամբոխն կը մղէ անվերջ ։ Ա՜խ․ և մի Գերման կը յանդգնի՞ իւր տան մէջ մնալ․ կը յուսա՞յ թերևս ճողոպրիլ աղէտէն որ ամենուն կ'սպառնայ ։ Մայր սիրեցեալ, ահա կ'ըսեմ ձեզ, այսօրուան օրս շատ կը ցաւիմ որ վերջերս երբ զօրաժողով կը լինէր քաղաքացիներէն՝ զիս ազատագրեցին ։ Յիրաւի միամօր որդի եմ և բազմահոգ է մեր կալուածոց մատակարարութիւնն ու բազմաղբաղ՝ մեր գործ, բայց լաւագոյն չլինէ՞ր սահմանագլխոյն վերայ դիմակալել թշնամւոյն քան աստ թշուառութեան և ստրկութեան սպասել ։ Այո՛, ո՛յսպէս կը խօսի ինձ ոգիս, և լանջացս մէջ կը յառնէ արիական տենչ ապրելոյ և մեռնելոյ հայրենեաց համար և ընծայելոյ այլոց մի ազնիւ օրինակ ։ Ճշմարիտ կ'ըսեմ, եթէ Գերմանական երիտասարդութեան ծաղիկն, համաշունչ և միաբան, գումարուէր սահմանագլխոյ վերայ, օտարաց տեղի չտալոյ անդրդուելի որոշմամբ, ո՜հ, անտարակոյս չպիտի կոխէին մեր ցանկալի հողն և մեր աչաց առջև չպիտի վայելէին մեր երկրին պտուղներն, չպիտի հրամայէին արանց և չպիտի առևանգէին կիներն ու աղջիկներն ։ Ինձ լսեցէք, Մայր, ի խորս սրտիս վճռուած է ի գլուխ հանել ընդհուպ և առժամայն իսկ ինչ որ արդար կը թուի ինձ և բանաւոր․ զի ով որ երկար կը մտածէ՝ միշտ չընտրէր լաւագոյնն ։ Գիտցէք որ այլ ևս տուն չպիտի դառնամ ։ Աստի դէպ ուղիղ կերթամ ի քաղաքն և մեր պատերազմիկներուն կը նուիրեմ այս բազուկն և այս սիրտն ի պաշտպանութիւն հայրենեաց ։ Եւ թող պատմեն հայրս թէ պատուոյ զգացումն չշարժե՞ր նաև իմ սիրտս և թէ բարձրանալոյ չունի՞մ իղձ ։

Անդ յայնժամ խորհրդաւոր կերպով պատասխանեց բարեգութ և զգօնամիտ մայրն, անձայն արտասուք հեղլով, զի դիւրաւ կուգային նմա արցունք յաչկունս ․

Որդեա՛կ, ի՞նչ բան այս աստիճան փոխեց զքեզ և քնաւորութիւնդ որ չես խօսիր մօրդ, ինչպէս երէկ և միշտ, տրձակ համարձակ և չես ըսեր սրտիդ բուն բաղձանքներն ։ Եթէ երրորդ ոք լսէր զքեզ, արդարև խօսքերէդ հրապուրեալ, մեծ գովեստիւ պիտի գովէր զքեզ և պիտի գովէր որոշումդ իբրև ամենապատիւ խորհուրդ․ բայց ես կը պարսաւեմ զքեզ, վասն զի, գիտե՞ս, ես լաւագոյն կը ճանչեմ զքեզ․ սիրտդ յինէն կը ծածկես և բնաւին ուրիշ խորհուրդներ ունիս ։ Գիտեմ, ոչ թմբուկն զքեզ կը կոչէ և ոչ շեփորն, ոչ իսկ փափաքդ ես հանդերձեալ երևիլ օրիորդաց․ զի ո՛րչափ և քաջ լինիս, քու կոչումդ է լաւ պահպանել մեր տունն և խնամարկել հանդարտօրէն մեր դաշտաց ։ Ուստի ըսէ՛ ինձ համարձակ, ի՞նչ է այն որ կը դրդէ զքեզ այդ որոշման ։

(Շարունակելի)

Վրիպակ․ — Վերջին 6րդ մասին առաջին սիւնակին մէջ [illegible] պիտի լինի [illegible], երկրորդ սիւնակին մէջ [illegible] և [illegible], պիտի կարդացուի [illegible] և [illegible] է,․

չաց համար, երկուքն Հայոց, մեծ Աստուծոյ սահմանուած։ Նաև պարտիմ խնդրել բացէն 300 Անգլ. ոսկւոյ գումար մը՝ Անդրաւքի Բարեկարգեալ (Անգլիականացեալ) Հայոց Ս. Գրիգոր եկեղեցւոյն շինութիւնն աւարտելու համար։ Արքեպիսկոպոս Մկրտիչ բազում երախտագիտութիւն կը յայտնէ Ձեր Սրբազնութեան իմ միջնորդութեամբ։ Տեսայ որ ձեր ընծայ ղրկած վերարկուն առաջին անգամ գործածեց Նոր կիւրակէին, երբ իրեն օգնեցի 100 անձանց հաղորդութիւն տալու, և երբ նա եօթն տղայ մկրտեց ջրոյ մէջ ընկղմամբ, արարողութիւն մը, որոյ մասին Հայք մի մասնաւոր գրութիւն ունին։

«Պատիւ ունիմ լինել, Միլորտ Արքեպիսկոպոս,

Ձեր Սրբազնութեան
հաւատարիմ ծառայ
Հ. Գ. ԴՐԻՍԴՐԸՄ

Աւասիկ "Մկրտիչ Արքեպիսկոպոսին և փոքր Ասիոյ Հայ Եկեղեցւոյն Բարեկարգման գործն ի նպաստ" Անգլիական ժողովրդեան ուղղեալ Հրաւէրին պատճէնը։

«Վերջին տասն և հինգ տարիներու միջոցին փոքր Ասիոյ Հայ Եկեղեցւոյն մէջ քննութեան ոգի մը արթնցած է, չրջաբերութեամբ Ս. Գրոց և Անգլիական Եկեղեցւոյ Աղօթագրոց Հայերէն և Թուրքերէն լեզուովք։ Ամերիկեան Պորտի Միսիոնարք 40 տարիէ ի վեր կ'աշխատին այդ կողմ, և իրենց վարդապետութիւն տարածելու մտօք, թէ ուղղակի և թէ անուղղակի կերպիւ։ Բայց (Ամերիկացւոց) Ժողովական Դրութիւնն անհամոյ է Արևելցի Քրիստոնէից մտածման կերպին, որոցմէ չատեր զօրեղ համակրութիւն մը կը տածեն Եպիսկոպոսական Դրութեան, և կրօնային պաշտաման մէջ Պատարագի ներկայութեան։

«Իբր 13 տարի առաջ, Անդրաւքի Հայոց Արքեպիսկոպոսը և Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնական գլխաւոր կեդրոններէն միոյն՝ Սսոյ վանքին կաթողիկոս Մարգին (Մարտիրոս) Մկրտիչ, իւր ժողովրդին խնդրած տեղեկութեանց վրայ, որք վիճաբանութեան բռնուած էին Ամերիկացի Միսիոնարաց հետ, Աստուծոյ Բանն ուսանելու հետամուտ եղաւ, և այսպէս համոզուեցաւ իւր Եկեղեցւոյն իսկ հակաւետարանական սխալմանց և զեղծմանց։ Շատ մասնաւոր կռիւներէ և յարատև աղօթքներէ ետք, յանուն ճշմարտութեան որոշեց թողուլ իւր եկեղեցական աստիճան և պատիւ և հարստութիւն, և Բողոքականութիւն ընդունիլ։ Բայց Ամերիկացւոց Ժողովական Դրութիւնն ունէր այնպիսի մասեր, որոցմէ կը խորշէր, և վճռական քայլը չէր առած տակաւին երբ Անգլիական Աղօթագրքին թարգմանութեան պատահեցաւ։ Խորին քննութենէ և չատ աղօթքէ ետք, հանգուցեալ Կոպատ Եպիսկոպոսին դիմեց հաղորդակցութիւն հաստատելու համար։

«Անոր հետ յաճախակի հաղորդակցեցաւ և Կ. Պոլսոյ Տք. Քեօլ Միսիոնարին հետ անձնական յարաբերութիւններ ունենալէ ետք, հրապարակաւ յայտարարեց թէ Անգլիոյ Եկեղեցւոյն յարած էր, և այս պատճառաւ հալածանք կրեց և ամեն ինչ կորոյս։ Այսու համերաշխ պահպանեց իւր գիրք, և Անդրաւքի Հայոցմէ աւելի քան 300 հոգի յարանէ միացին իրենց կապակցութեան մէջ իւր հետ։ Հանգուցեալ Կոպատ Եպիսկոպոսը մինչև իւր մահ վեհանձնապէս պահպանեց Արքեպիսկոպոսն և իւր տրամադրութեան ներքև դրուած գումարներէն տուաւ անոր կենաց ապրուստն. և հանգուցեալ պատուելի Նևատնի օգնութեամբ, մի քանի տարի առաջ յատկապէս ձեռք բերուած գետնի մը վրայ Եկեղեցւոյ մը չինութեան սկսուեցաւ, յորում կարենայ քարոզել իւր Բարեկարգեալ Հայոց Հօտին։ Բայց Հայոց Պատրիարքին Բ. Դրան մօտ ի գործ դրած միջնորդութեանց չնորհիւ, վեց տարի յապաղեցաւ այս Եկեղեցւոյ չինութեան հրամանագիրը (ֆերման)։

«Այժմ, հրամանագիրն առնուած է, և Եկեղեցւոյն պատերը բարձրացած են, բայց գործը կանգ առած է պակասող դրամոց սպառման պատճառաւ։

«Արքեպիսկոպոս Մկրտիչ, այսպէս զրկուելով անձնական պահպանման առնեն միջոցէ և իւր ժողովրդին համախմբելու համար Եկեղեցւոյ մը չինութիւնն ի գլուխ հանելու յուսէն, պարտաւորեցաւ Անգլիոյ մէջ ճշմարտութիւնը սիրողներուն և Արևելեան Եկեղեցւոյ բարեկարգութեան համակրողներուն օգնութեան դիմելու, որպէս զի, նախ, ամբողջացուի Անդրաւքի մէջ պէտք եղած համեստ Եկեղեցին, և դպրոցներ կարենան չինուիլ, և երկրորդ, իւր սկսած գործը պահպանուի նպաստողէս։

«Բոտ միաձայն վկայութեան անոնց որք կը ճանչնան երկիրն ու ժողովուրդն, Հայոց մէջ ընդարձակածաւալ փափաք մը կայ բարեկարգելու իրենց Եկեղեցին մեր Եկեղեցւոյ օրինակին վրայ։ Այս փափաք կ'երևի ո՛չ միայն անոնց մէջ որք, Աւետարանական ճշմարտութեան ներշնչեալ, միացած են Արքեպիսկոպոս Մկրտիչի հետ, այլ և չատերու մէջ, որք դեռ պաշտօնապէս չեն զատուած Հայոցմէ, բայց սկսած են զգալ լինել այն սխալ վարդապետութիւններէն և նախապաշարեալ պաշտամանց ձևերէն որք ի կիր արկեալ են անոնց մէջ։

«Մկրտիչ Արքեպիսկոպոսին պատիւ և կացութիւնը լաւ կը ճանչնան և հզօրապէս կը յանձնարարեն՝ Քենդըրպըրիի Արքեպիսկոպոսն, Երուսաղէմի Անգլիական Եպիսկոպոսն, Կանոնիկոս Գրիսդրըմ,» (և Անգլիական Եկեղեցւոյ ուրիշ պաշտօնեայք, որոց անունները գրուած են բնագրին մէջ։)

Ի նպաստ Մկրտիչ Արքեպիսկոպոսի և անոր գործին հանգանակեալ գումարին վրայ հսկող Մարմինը բաղկացեալ է Քենդըրպըրիի Արքեպիսկոպոսէն, Երուսաղէմի (այժմ հանգուցեալ) Եպիսկոպոսէն, Պատ. Վիլբամէ և Գրիսդրըմ կանոնիկոսէ, պաշտօնեայք Անգլիական եկեղեցւոյ։

Անդրաւքի Եկեղեցւոյն գանձը Կ. Պոլսոյ Անգլիական Դեսպանատան մէջ արձանագրուած է յանուն Լորտ Շաֆդըսպըրիի, Պ. Ճ. Մաքկրեկորի և Գրիսդրըմ կանոնիկոսի։

Վերջապէս, "Հայոց հին եկեղեցւոյն մէջ բարեկարգութիւն մուծանելու", այսինքն Անգլիական եկեղեցին Հայոց մէջ տարածելու գործին ընդհանուր Ցանձնախումբը ներկայ տարւոյ համար՝ կը բաղկանայ Անգլիական եկեղեցւոյ պաշտօնեայ 25 եպիսկոպոսներէ, վարդապետներէ, և այլն, որոց գլուխը կը գտնուի իբրև Նախագահ՝ նոյն իսկ Անգլիական եկեղեցւոյ գերագոյն պետը, Քենդըրպըրիի Արքեպիսկոպոսը։

Վաղուան թուով ալ կը թարգմանենք այս Ցանձնախմբի կողմէ ներկայ 1882 տարւոյ Մարտ ամսոյ մէջ հրատարակուած Տեղեկագիրն և Հաշուեկչիռը՝ վերաբերմամբ ձեռնարկեալ գործին, որոյ վրայ, այս կերպիւ, մեր ընթերցողք կատարեալ գաղափար մի ունեցած պիտի լինին։ Մեր մասնաւոր դիտողութիւնները և տեսութիւնները աւելի ետքը պիտի յայտնենք։ Բ. Բ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
Ի ԲՐԴԱՀԱՅԱՍՏԱՆԷ

(Պատահական Թղթակից մը)

Սղերդ, 10/22 ապրիլ 1882

Տեղւոյս Հայոց Միացեալ ընկերութեան նոր չինելիք վարժարանը չնորհիւ տեղական կառավարիչ Վսեմ. Սալիհ փաշային և Առաջ. փոխանորդին կը յուսացուի որ մօտերս պիտի սկսուի չինուիլ։ Այս տեղէն բաւ պահանջման զատական նախարարութեան մի պաշտօնագրոյն՝ պարձեալ հաւանագիր մը չինուելով նոյնս ղրկուեցաւ, որն որ մեզ համար նպաստաւոր էր. մեք եւս զայս ազգային պատրիարքարանի և այլոց որոց անկ է իմաց տալով, և խնդրեցինք որ արքունական հրամանագիրն առնելով չուտով մեզ ղրկեն. բայց մինչև ցայսօր չի հասաւ. արդէն մեռան մեզ 150 ոսկւոյ հասաւ. Ներկայիս, կը խնդրեմք հրապարակաւ որ բարեհաճին վաղ ընդ փոյթ հրամանագիրն առնելով չուտով ղրկեն։ Չեմք գիտեր թէ վարժարան մը չինելու համար այսչափ քչքչել պէ՞տք էր. գործ մը որ տէրութեան քաղաքաց յառաջդիմութեան կը պատկանի։

Սալիհ փաշան 2 ամսէ ի վեր աւազակաց որջ եղող Բոչքօխան գիւղը բարեկարգելու զբաղեր է, ուր տեղ կը բնակին բոլոր հաչակաւոր աւազակները, որք ամեն օր բռնուելով Սղերդ կը ղրկուին։ այժմ միայն 30ի կը հասնի բանտարկելոց. սոցա մէջ կը գտնուին նաև Պօլսէն վերադարձող մի քանի Պէյեր. կը յուսացուի որ այս անգամ այդ տեղ բարեկարգութիւն պիտի գտնէ և Տիգրանակերտ երթևեկելու ճանապարհն պիտի ապահովուի Սալիհ փաշային չնորհիւ։ Կը լսուի նաև թէ Սասնոյ մէջ մօտերս հաչակաւոր կենծօյէ հասած մեծը սպանիկ են իւր սխալմամբ անծանօթ անձինք։

Այս տարի ձմեռը խիստ սաստիկ էր հոս, գրեթէ 2 արչինի չափ ձիւն եկաւ, որն որ 50 տարի է գրեթէ հոս տեսնուած չէր։ Այժմ ալ 10 օր է որ անձրևը սաստիկ կը տեղայ. կը յուսացուի որ բերքերը առատ պիտի ըլլան։

Բաղանիք առաը հաս հաս կը գըտնուի. ամենքն ալ անոյչ ջրոյն նուազութեան պատճառաւ ունին մի եռանկիւնաձև աւազան լի աղի ջրով մաքուր խուցի մը մէջ չինուած, ուր տեղ գնացողք պիտի հանեն քրտինք, ապա քրակ զգենուելով այդ աւազանի մէջ պիտի մտնեն լուացուին բոլոր արք, ապա կէս օրէն յետոյ կանայք ալ երթալով այդ կեղտոտ ջուրէն մէկ սափոր 10 փարա գնով պիտի լուացուին ու իբր մաքուր տուն պիտի գան։ Բաղնիքի մէջ նախութիւնք մինչ կը գըտնուին, այնպէս որ եթէ քիչ մը չատ նստելու ըլլալ նէ, անչուչտ դուրս հանել խիստ դիւրին է հաստատ։ Այս բաղանիքի մը համառօտ նկարագրութիւնը, որն որ չրջագայած 13 քաղաքաց մէջ ինծա տեսած չեմ. պէտք է գիտնալ որ քրիստոնեայք նուազ կ'երթան անդ։

Ոտնլուայի օրն գիտեցի տեղւոյս Հայոց սովորութիւնն. ի ժամանակին՝ բերին մի կոնք հողեղէն տիրացուաց կարծած անդին դնելով կրօնաւորք սկսան մէկմէկու ոտք լուալ, ապա ժողովուրդք արամբ և կանամբ սկսան գալ, ամեն ոտք լուալ կուտայ, մէկը ջուրը աչքերուն ու երեսին կը քսէ, մէկը ջուրը կը խմէ, մէկը կը ծծկոտի, մէկը կը պոռայ, այնպէս որ զգայուն անձինք փախան դուրս ելան եկեղեցւոյ արարողութիւնն ալ անկեալ մնաց. այս մասին թէպէտ և բողոքեցինք, բայց ի զուր. Պատրիարքարանի ուչադրութիւնը հրաւիրելով կը խնդրեմք։

Անցեալ տարի երբ Բաղէչ կը գըտնուէի, հոն ալ այսպէս էին, բայց ոչ այսչափ. թէպէտ և քահանայն կուզէր այս կերպին հասցնել, բայց չյաջողեցաւ. Բաղէչոյ մէջ չարաթ առաւօտ բոլոր ջրերը կը վաթէին իբր թէ Զատկին գիշերը կարասներու մէջ եկեր միջեր է։ Երանի թէ այս անխորդապաշտութիւններն օր յառաջ վերցուէին, և փոխանակ ջրերը վաթելու, իրենց ներկայ հաւմէջականութեան գիտելու միտումն արտաքէին, որն որ իրենց պատիւ չի բերեր։

Սղերդի մէջ 6 տարեկան աղջիկը 18–20 տարեկան տղային կը նչանեն և հազիւ 10 տարու եղած կ'ամուսնացնեն։ Այս տարի պատիւ ունեցանք մի քանի տեղ հարսանեաց հրաւիրուիլ. ուչադրութիւն ընելով գիտեցի սոցա մի առ մի սովորութիւնը։ Երեկոյեան (կիւրակէ) ժամը երկուքին հանդիսականք կը հաւաքուին և ժամը 6ին կ'երթան հարսին տունը՝ նչանը օրհնել տալու, հետերնին մի կարաս գինի առնելով. քահանայն կ'սկսի խիստ աղօրինաւոր կերպիւ արաբ. լեզուաւ կատարել, յետոյ հարսին և փեսային հայրն 200 դրամնոց երկու հաց կառնեն ու կսկսին բեկանել. ով որ չատ կտրելու ըլլայ՝ իբր թէ անոր ուղին կտրած է. ապա կը բերեն մի երկար լաթ 6—7 արչին երկայնութեամբ կը փռեն հանդիսականաց առջև ու վրան մէջմէկ քիչ չամիչ և հաց դնելով, քիչ մ'ալ մսով պատրաստած, չուտուելիք կերակուր մը կը բերեն, գինին և օղին խիստ առատ և չատ չատ տալով կուտեն, կըմպեն, կ'երթան կ'երթան փեսային տունէն ձեռքերնին մոմերով. հոն ալ երկու ժամու չափ նըստելով փեսան կը հագուեցնեն առանց երգեցողութեան. ապա լմնցնելուն, վիզը չուան մը անցունելով փեսան հագուեցնողք զայն օղիով կը ծախեն. յետոյ կ'ելնեն հանդիսու անխնամ արաբերէն ու քրդերէն խաղեր կանչելով հարսին տունը կ'երթան ու անկէ եկեղեցի. երբ հարսին տունը կը հասնին, փեսային հայրը կամ մօտաւոր ազգականն մը ներս կը մտնեն, հարսին դօտին կապելէն ետքը դուրս կը բերեն զանիկայ. նոյ պզտիկ (10 տարեկան) փեսան առանց չափազանցութեան 25. խորճ աղջիկը կուլայ չիգար, բռնութեամբ հանդերձ կուլան հարսնկօրը կռնակը ու կը բերեն եկեղեցի. հարսը կուլայ, հարսնկօրը կուլայ ուղղակի ձայնիւ, վերջապէս եկեղեցի բերելով քահանայն կը պսակէ զանոնք. ապա պսակը լմննալէն վերջ փեսային կռնակը կուտան աքրաքերին չուրջառը, ու յայրը կ'սկսին համբուրել, յետոյ պօռալով պօռալով տուն կը բերեն, և երբ տուն կը հասնին, դրան ներս մտած առանձին ահագին սափոր մ'ալ գառն զարնելով կը կոտրեն, իբր թէ թչնամիին գլուխը կը կտրեն. մոցայ ըսել որ հարսնկօրը ձեռքն ալ գլուխը ուժգին լաթով մը կապուած խուր մը կայ, զոր որ առատաստի գիչեր քահանայն իւր օրհնութեամբը պիտի քակէ։ Ի վերջոյ երեք օր չանցած՝ հարսը կը փախչի հօրը տունը, և խիստ դժուարութեամբ կրնան մէյ մ'ալ բերել անդ։ Աչհաւանի . . . ահա, այլ առակ մ'ալ, որն որ կրօնական ժողովոյ ուչադրութեան կը պատկանի։ Դեռ չատեր կան գրելիք, բայց կը լռեմ վախնալով որ եթէ աղջկանց վարժարան մը բացուի Հայուհեաց ընկերութեան կողմէն, յայնժամ զէթ սա անկարգութիւնն կը վերնայ մէջ տեղէն որն որ ապիաութեան արդիւնք է։

Անցեալ տարի երբ հայրենիքս (Երզնկայ) Պօլսէն վերադարձայ ու անտի ի Սղերդ ուղևորեցայ, Երզնկայ 8–9 տարուան միջոցին մեծ յառաջադիմութեան մէջ տեսայ չնորհիւ Երզնկայի Բ. Լուսաւորիչ Գեր. Հմայեակ սրբազանի. Ազգ. վարժարանաց, աղջկանց և ընկերական վարժարանաց ու Ներսէս հայրապետի վանուց գիչերօթիկ վարժարանին չի յուսացուիլիք յառաջադիմութիւնը երբ տեսայ, որչափ ուրախացայ գրչով չեմ կրնար յայտնել. որն որ կրնայ գերազանցել Հայաստանի չատ մը քաղաքները. Թող մասնաւոր խումբ մը անձինք այն խօսքը թէ «Երզնկայի հողը օրհնեալ է, իսկ մարդը անիծեալ», երբ Երզնկացւոց երջանկութեան աստղը մնալը կը տեսնեն կամ կը լսեն մի բարեձամ Առաջնորդի չնորհիւ, որուն ընթացքը կրնայ այլոց օրինակ ըլլալ։ Այս անգամ եւս Ձեր Պատ. Մասիսի մէջ կարդացի թէ Երզնկացիք ուսման հետ մէկտեղ արհեստներն ալ ծաղկեցնելու համար մի քամպօրի, ապայի և սօֆ հինելու գործարան բանալու մտադիր են. այս ամթիւ եւս անհուն ուրախութեամբ յայտնել կ'ուզեմ, կը խնդրեմք որ բարեհաճիք զայս հրապարակաւ իմացնել որ եթէ սօֆ չինելու վարպետի կարօտութիւն ունին, թող մեզ և կամ տեղւոյս փոխ-առաջնորդին հետ բանակցին, մենք կրնանք ի նպաստ Երզնկացւոց սոյն բարի գործոյն իբր քաջալերութիւն Տէհ գիւղէն աժան գնով մի կամ ալ աւելի վարպետ ղրկել իրենց։ Հասցէն ալ սաստէս Գեր. Ց. Ծ. Վ. Նէմբուղեան առաջնորդական փոխանորդ ի Սղերդ և Կարապետ վ. Տ. Խաչատուրեանց Երզնկացի։

Ընդունեցէք . . .
Կ. Վ. Տ. Խաչատուրեան
Երզնկացի

Ց. Գ. Տեղւոյս կառավարչին Աֆրիկեան Տրիպոլոյ կուսակալական կառավարիչ որոչուիլը կը յայտնէք, բայց Բաղէչի կուսակալին և տեղւոյս ժողովրդոց թախանձանօք կրկին Սղերդի կառավարիչ ընտրուեցաւ յօգուտ և յուրախութիւն տեղւոյս Հայ ազգայնոց, որոց մատուցած բարիքը կանխաւ յայտնուած է ձեզ։

ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՐ ԱՏՈՄ

Մեծ. Գրասէր Ատոմ վերջին ուրբաթ աւուր թուով Ձեր Մասեաց բարձանքէն Դպրոցասէր Տիկնանց վարժարանը բրած մի այցելութիւնը կը պատմէր, յորում այդ հաստատութեան անուս աչակերտուհեաց համեստ կրած անհուն պատրանաց նկարագիրը կ'ընէր խորին դառնութեամբ։

Կը ներէ՞ ինձ արդեօք մեծանուն գրագէտն իբր խոնարհագոյն հարցնել իրեն թէ ինչո՞ւ փոխանակ ազատ թռիչ տալու իւր բազմապատ երևակայութեան, իւր առօրեայ չրջանակին մէջ գտնուած միայն օրիորդաց վարժարաններուն վիճակը ի նկատ առնելով, որոնցմէ չատերն ազգային ծանօթ դժբաղդութեամբ 15–20 տարիներէ աւելի կեանք ունենալով հանդերձ, հազիւ կրցեր են թերուս պատանուհիներ ներկայել ազգին, չի խնդրեր որ լոկ [illegible] աչակերտուհեաց նուիրեալ դպրոց մը արդէն իսկ կէս պատրաստեալ վարժուհիներ ներկայեր ազգին։ Մի՞թէ քիչ մ'աւելի ներողամտութեամբ վարուելու չէ՞ր կըրթարանի մը նկատմամբ, որոյ աչակերտուհիք թչուառ և աղէտ ծընողաց զաւակունք մեծ մասամբ, հազիւ նոր հորիզոն մը թևակոխած՝ սովորական դպրոցներէն բազմապատիկ դժուարին աչխատութիւն յաղթահարելու են զիրենք խնամող մարմնոյն։ Եթէ պատուարժան գըրագէտը կ'ուզէ միայն երևակայել, այնչափ մեծ պատրանաց չպիտի հանդիպէր անչուչտ։

Ի հարկէ Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնը, եթէ փոխանակ իւր ծաղումէն մի քանի ամիս վերջ գիւղին աղքատիկ մանկանց հաւաքելու, (որոյ մարդասիրական և կըրթական տեսակէտով ըրած օգուտը ի բաց թողլով լաւ կրնէր, վարժուհիներու անմիջական պէտքին համապատասխանելու համար, փոքր ինչ դրամագլուխ ապահովելէն վերջ բազմահայ մի թաղի մէջ բարձրագոյն դասարան մը հիմնէր ինչպէս մտադիր է այժմ։ Կը փափաքէի խնամել թէ արդեօք ո՞ր գործ իւր ակար սկզբնաւորութիւնը չէ ունեցած. ո՞ր գործ փորձառութեամբ և բարի կամեցողութեամբ միայն հետզհետէ զարգացման ու բարելաւութեան ուղին չէ մտած, և հա՞րկ էր միթէ որ երջանիկ երևակայութեամբ օժտուած բանաստեղծի մը պատրանաց հակադրեցութիւնը ազգային բազմաչխատ ընկերութեան մը կըրէր, երբ նա (Մեծ. Գրասէր Ատոմ) իւր ազգասիրական անհուն ըղձից համեմատութեամբ կը պահանջէր որ մի քանի ամսուան Հայուհիներ իրենց եռանդեամբ միայն արդէն իսկ կատարած ըլլային վասն իգական սեռի դաստիարակութեան զոր ինչ ազգային բարձրագոյն իչխանութիւնք չեն կրցած տակաւին կատարել արական սեռի դպրոցներուն համար։

Բայց մեզ լաւ է քննադատութիւնը որչափ ալ անողորմ ըլլայ, և քանի որ ի մօտոյ ուսումնարան մը բանալու հետամուտ է յիշեալ ընկերութիւն, կը մաղթեմ որ Դպրոցասէր Տիկնայք իրենց նպատակին անմիջական կարևորութիւնն ի միտ առնելով, կրկին եռանդեամբ համակեալ անհատապէս ոչ ինչ ջանք և զոհողութիւն խնայեն ազգին վարժուհիներ պատրաստելու կենսական գործին գլխաւոր հիմք դընելու համար։

Մի Հայուհի
22 ապրիլ 1882 Ն. Ս.

ՃԻԶՈՒԻԹՔ Ի ՎԱՆ

Վանէն մարտ 23 թուով կը գրեն առ Մշակ։

"Մեր ցաւեր մէկ չեն, այլ հազար են. ո՞ր մէկն պատմեմք . . . . Եզուիտներն ալ եկած են այստեղ բարոյապէս և մտաւորապէս ճնչել։ Սոքա իրենց գլխաւոր մարդորսութիւնը սկսած են ընքոյչ սեռին մէջ, հարուստ ընտանիքներու մօտ կը յաճախեն և կ'աչխատին համոզել կիներն։ Ափսո՜ս որ մի օրինաւոր օրիորդական վարժարան չունինք այստեղ, որպէս զի ընքոյչ սեռն իւր անկած վիճակէն վեր բարձրացունէր։ Մեր Եզուիտ հայրերի ձեռքն կ'անցնի Լեվանթ Հէրըլտի մի թերթն ուր Կ. Պոլսի "Մասիս" լրագրին մէջ Քէչեանի գըրած մի յօդուածն Եզուիտներին և Նոայլ մարքիզին նկատմամբ թարգմանուած էր։ Եզուիտներն չատ կը կատղին այդ յօդուածի դէմ և այդ առիթով կասեն մի բարեկամի թէ "Թող հազարաւոր "Մասիսներ" գրեն մեզ դէմ. ի՞նչ արժէք ունին դոքա Եզուիտ ընկերութեան պէս մի զօրաւոր մարմնի առջև. մենք ցոյց պիտի տանք թէ այդ ընկերութիւնը հաստատուն է ժայռի պէս՝ որուն զարնուողի գլուխը կը ջախջախի. թող ձեր լրագիրներ իրենց ուզածին չափ գրեն. մենք գիտենք թէ Ցանկա-Հայաստանի մէջ ինչպէս պէտք է մեր գործ յառաջ տանել և դուք ալ կը տեսնէք։ Այս տողերին վրայ մի բառ անգամ յաւելու աւելորդ կը համարիմ, զի ինքնին յայտնի է որ Եզուիտներ մեծ յաջողութիւն պիտի ունենան այստեղ, եթէ մեք տակաւին անդըգայ և անտարբեր մնալով, չօգնենք իրարու և Ցանկա-Հայաստանի կըրթական գործն անձամբ յառաջ չըտանինք։

Մարտ 16/28 թուով ալ հետևեալը կը գրեն նոյն թերթին.

"Այսօր կուզեմ գրել ձեզ մասնաւորապէս Եզուիտների մի արարքին նկատմամբ։ Աչխարհի չորս կողմերէն վռնտուած այս արարածները մեր երկիրը իրենց հանգստութեան տեղ դարձնելով, կ'ուզեն իրենց ճիրաններուն որս անել խեղճ հայերը։ Ի՞նչ կ'ուզեն մեզնէ այս մարդեր. ինչո՞ւ համար եկած են այստեղ. վարժարաններ բանալ, մեզ դաստիարակել կ'ուզեն։ Բայց մենք պէտք չունինք նոցա վարժարաններուն. միթէ հայեր չե՞ն կարող հոգալ իրենց վարժարանի պէտքեր եթէ ամեն կողմէ ձեռք ձեռքի տուած օգնեն։ Եթէ այդ Եզուիտներու նպատակ կրթութիւն տարածել է, որպէս իրենք կ'ասեն, ե՞ր կ'աչխատին անարգ միջոցներով հոգիներ որսալ։ Եզուիտները իրենց հետ բերած են մի քրիստոնեայ առաքելութիւն՝ պատրաստ սպասաւոր։ Իրենց գրագիրներէ մի աղքատիկ հայ աղջկայ վըրայ նչանեցին այդ սպասաւորը։ Բայց նախ պայման դրին խեղճ աղջկան որ իւր լուսաւորչական կրօնը ուրանայ և կաթոլիկ դառնալով ունի անէ Եզուիտութեան հաւատարիմ մնալ։ Այս սկանդալ ուրացութիւնը կատարուելէ յետոյ պըսակեցին զինք սպասաւորին։ Կրօնը խղճի խնդիր լինելով, ամեն մարդ ազատ է ուզած կրօնքին ծառայել, լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ, դէիստ և մինչև իսկ անհաւատ լինել, այդ Աստուծոյ և իւր գիտնալիք բանն է։ Բայց ինչպէս որ մեք ուրիշի կրօնական հաւատալիքները ազատ թողուլ կ'ուզենք, ուրիշն ալ պէտք է որ մեր կրօնական ազատութիւնը յարգէ. թող լինի նա ռախցի, եւրոպացի կամ ամերիկացի։ Մի աղջիկ ամուսնացնելու համար պարտաւորցնել զայն որ իւր լուսաւորչական կրօնը ուրանայ, մեք մահմետականներուն կողմէն միայն տեսած էինք այդպիսի բռնութիւն. այժմ կը տեսնեմք որ քրիստոնեայ Եզուիտները կը գերազանցեն զանոնք։ "Սուրբ է կինն անհաւատ արամբն և այրն անհաւատ կնաւն" (Ա. Կորնթ. Գլ. Է. 14) կը գրէ Ս. Գիրք։ Երբ քրիստոնէական ներողամիտ կրօնք թոյլ կը տայ մինչև անգամ անհաւատ կին ունենալ, արդեօք Եզուիտները մեր կրօնակիցները զորս հերձուածող կ'անուանեն, անհաւատէն աւելի պի՞ղծ կը համարին որ ստիպեցին լուսաւորչական հայ աղջկան ուրանալ իւր կրօն և ազգութիւն (աղջիկը այժմ Եզուիտների տան մէջ պարտաւորուած է թիւրքերէն խօսիլ և ոչ հայերէն)։

Կը կրկնեմք թէ մեք կրօնական ազատութեան ջերմ կուսակիցներէն եմք, և մեր կաթոլիկ կամ բողոքական հայ եղբայրն իւր ընդունած կրօնին համար անպատուելը վայրենութիւն կը համարիմք. բայց երբ կը տեսնեմք որ այլակրօններ մեր մէջ ամենատաւր միջոցներով պրօպագանդա անել կ'ուզեն, այդ ժամանակ լռել ալ անզգայութիւն կը համարիմք։ Մեք, իբր Լուսաւորչական Հայ, չեմք համաձայնուիր բողոքական կրօնին հետ. բայց ի՞նչ կարող եմք ասել այստեղ գտնուող մի քանի բողոքականներուն, որք, թէև իւրեանց մայրենի եկեղեցի փոխած, չեն ուզեր փոխել նաև իւրեանց ազգութիւն. մաքուր հայերէն կը խօսին, հայի պէս կը զգան և տակաւին վերջին ժամանակներ, կրկին անգամ լինելով, իրենց միսիօնար Պ. Բարնըմի միջոցով խնդրագիր տուին իւրեանց Հայրենիկն որ մեր ազգային վարչութեան իրաւասութեան տակ մտանեն, Սահմանադրութեան համեմատ իրենք ալ քուէ տալու իրաւունք ունենան, ապա մնալով միայն իւրեանց ժողովարան երթալ աղօթելու։ Ուրախութեամբ կը փութամ իմացունել ձեզ որ մեր բողոքական եղբայրներէ մի քանին մեր վարչութեան դիմելով յայտներ են թէ Հայրենի գրած ազգային տուրքը (որ առաջնորդարանին և այլ ազգային ծախքերու յատկացած է), իրենք ալ պատրաստ են վճարել իբր հայ ազգակից, և իւրեանց անունները ալ արձանագրել տուած են ազգային տուրք վճարողներու տետրակին մէջ։ Այդ տուրք վճարողները միայն իրաւունք պիտի ունենան, սահմանադրութեան համեմատ ազգային ժողովականները ընտրելու համար քուէ տալու։

ԱԶԳ. ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան ընդհանուր ժողովը՝ նիստ ունի յառաջիկայ հինգշաբթի օր 29 ապրիլ, ի Խորհրդարանի Գալաթիոյ ժամը 5 ին, օրակարգ ունենալով

1. Ընթերցումն և վաւերացումն Նախորդ նստի Ատենագրութեան,
2. Դիւանական Թղթակցութիւնք,
3. Եռամեայ Համարատուութիւն Կեդր. Գործ. Ժողովոյ,
4. Առաջարկութիւնք,
5. Ընտրութիւն պակասեալ Երեսփոխանուհեաց տեղ,
6. Փակումն Գ. տարւոյ չրջանի։

Կ. Պոլիս 26 ապրիլի 1882

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ
Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՑ

Ցուցակ Նուիրատուաց ի [illegible]

	Արծ. ղշ.
Բարձ. վսեմ Գալիպ փաշա	315
Վսեմ. Արդարութեան ատենից քննիչ Ասիմ բաշա	105
» Թէֆթէրտար Ջէքի էֆ.	75
» Աչարնալըրի Մուէտտին պէյ	50
Անգլ. հիւպատոս Վսեմ. Հօրաթիօ Գիփնէր	105
Հիւպատոսարանի թարգման Մ. Ենովք Ճելաճեան	52 20
Արժ. Տ. Աստուր քահանայ Դանիէլեան	40
Մեծ. Տեարք,	
Մարտիրոս Ճիվէլէկեան	500
Կարապետ Փափազեան	400
Մեհրան Յ. Յովակիմեան	200
Մկրտիչ Պալըքճեան	120
Եօրկաքի Վասիլիատիս	120
Մակարիոս Տէր Աբրահամեան	100
Դանիէլ Մաղաքեան	100

Յակոբ Հաճեան	100
Միխայլ Աթէշ օղլու	100
Հաճի Արսլան օղլու	100
Ոսկեան Հազարապետեան	100
Եօրկաքի Ուզունեան օղլու	100
Եանի եւ Զանիէլ Մօխի օղլու	100
Միխայլ Եօրտան »	100
Հաճի Պօտոս Սիմէոն »	100
» Եօրկաքի փափազ »	100
Հաֆըզ պէյ Ուզունըլու զատէ, նախագահ վաճառ. ատենին	100
Յովհաննէս Աբրահամեան	100
Գաբրիէլ Գէորգեան	80
Հաճի Խլիա Եէսիր օղլու	80
Եղիազար Սիմոնեան	80
Նիքօլա Գազանճի օղլու	80
Հաճի Վասիլ Խիթխի »	80
Միքէ Հաճի Եօրկի »	80
Ըստավրի Գոճասար »	80
Յարութիւն Սիւգմէեան	80
Վասիլիոս Զախարիատիս	80
Սիմէօնաքի Տօնու Քարա օղլու	80
Յարութիւն Չիլինկիրեան	80
Մօնսիէօ Ֆրէտ Ուիլիամ Հէտ	65
Մարտիկ Հինդլեարպէյէնտեան	60
Անդրանիկ Զալուքճեան	60
Դանիէլ Պալըքճեան	60
Պօտոս Միխայէլ օղլու	60
Թոտոր Արսլան »	60
Խորտան Մանասա »	60
Յակոբ Զամպաքճեան	60
Մինաս Սիմէօն օղլու	60
Հաճի Նիքօլա Հճի. Եօրկաքիօղլու	60
» Բանայօթ » » »	60

(Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ. —Մեր Ուրբաթ օրուան խորագրով յօդուածոյն մէջ՝ փոխանակ «գրաւելէն զատ» ըսելու՝ պէտք է ըսել «գրաւելէն յառաջ»․ եւ փոխանակ «պալեոմի», պարիօմի։

Ս. ԷՍՄԼԸՐԵԱՆ

(Գատրդ Օսմանեան ճեմ-է)

Երկար ժամանակէ ի վեր իւր գասալօսած համբաւաւոր դիւրութեան մէջ միշտ ուղղագրութեան համար ամենահարկաւոր եղող քերականական բոլոր գործածական կանոնները պարունակող ձեռագիր գասագիրք մը պատրաստած լինելով կը խոստանայ 6 ամսուան մէջ սովրեցնել որ և է ձեռագիր ուղիղ կարդալ, անսխալ գրել և կարդացածը հասկնալ. աւելի ընդարձակ տեղեկութեանց համար պէտք է դիմել Մասիսի գրասենեակը։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ.ՅՍ. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ

Նոր վաճառատուն Նպարեղէնաց և Եւրոպական ուտելեաց ըմպելեաց

Կ. Պոլիս Մըսըր չարշըլի մօտ Թահմիզ փողոց Թիւ 70.

Այս նոր վաճառատան մէջ կը գտնուին նպարեղինաց ամենէն ընտիր տեսակները. Սիպիրիոյ առաջին կարգի կարագ իւղ, խահուէ, շաքար, պանիր, ձէթ, բեթրոլի կազ, բրինձ, լուբիա, օսլայ, աճառ, ձիթապտուղ, մաքառնա, բալթալթէս, Եւրոպայէն տուփերոբերել տրուած աղած ձկներ, Մալակավյի, Պորտոյի եւ Շամբանիայի գինիներ, քոնիաքներ եւայլն եւայլն։

Գիներու չափաւորութեան եւ կշռոց ճշգութեան մասին պատուարժան յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի լինին։ Վստահ եմք որ ազնիւ ազգայինք այսպիսի Հայկական վաճառատուն մը պիտի քաջալերեն, չը դիմելով օտարին, որով իրենց գործնական ազգասիրութեան օրինակն ընծայած պիտի լինին։

Մայրաքաղաքիս թաղերէն ու արուարձաններէն առ մեզ ուղղեալ յանձնարարութիւնք՝ թէ մեծ եւ թէ փոքր քանակութեանց համար՝ փութով եւ սովորական ճշգութեամբ կը կատարուին։ 26—18

ԲԷՔ ԶՕԳ ՔԻՄԷՍՆԷՅԻ
ՄԻՒՔԷՏՏԷՐ ԻՏԷՆ
ՎԷԼՎԷԼԷԼԻ ԽԱՍԹԱԼԸԳ

Պու խասթալըգ ճիւզի պիր միյտէ պօզուգլուգուիլէ պաշլար, լաքին էկէր իպթիտատան մուհիմսէ իւմէգ իւէ, նիհայէթ լիճուալըն հէր թարաֆընա վէ պաշլըճա օլալըգ, գարա ճիյէրէ վէ միտէյէ կէ ինհայէթ պիւթիւն էթ պէկլէրինէ սիրայէթ իտէր, վէ պու սուրէթլէ պու խասթալըգա մուպթէլա օլանլար մուտէթլը նախօշլըգ ընտէ մուզտարըպ օլուր, էօլիւմ անլարի սու իւթիրապտէն գուրթարըլըպ էօլիւրլէր։ Պու խասթալըգ էյի Փարգ օլունմայըպ եանըլըլըր։ լաքին չու սիփալլար իյրատ օլունուրսա, մէզքիւր խասթալըգա մուպթէլա օլուպ օլունմատըղը անլաշըլըր. Թամամ իթտիքտէն սօնրա նէֆէս ալըպ վէրմէքտէ մուշքիւլաթ, գաշընթը վէ օգըընթը չէքէ՞րմիսինիզ։ Ծէրինտէն պիր աղըը վէ պու աղըը իլէ պէրապէր տայիմի պիր եօրկունլուգ տույա՞րմըսընըզ։ Կէօզլէր սարարը՞ր մը։ Սապահլարը տիշլէրտէ վէ տիշ էթլէրինտէ գալըն վէ եափըշգան պիր նէմլիք վէ աղըզ տատսըզլըղը վա՞ր մը։ Տիլ բա՞ղը մը տըր։ Գապըրգալարտա վէ սըրթտա աղըը տույա՞րմըսընըզ։ Գարըն ճիյէր պէօյլէմէսի կիպի սագ թարաֆընըզտա պիր թագըլըգ վա՞ր մը։ Գապըզըգ վա՞ր մը։ Ուֆուգի պիվագըյէթ եանի պօյլու պօյունա եաթմըշ օլուպ տա պիրտէն պիրէ գալգտըղընըզտա, պիր նէվի պաշ տէօնմէք վէ կէօզլէր գարարմագ կիպի չէյլէր օլուր մը։ Խուրար ա՞զ մը տըր վէ բէ՞ք ընքըր տըր։ Խուրար թօքլանը՞ր մը։ Թամամտան սօնրա՝ հէքիմլէրէ տանըշըր, միտէ պուլանդը՞ր մը, Սըգ սըգ խուրուճ չըղընթըլըգ վուգուն պուլուր մու։ Պիւթիւն պու հալլէր պիրտէն կէլմէզլէր, լաքին պու խասթալըգ թէսիր իտինճէ պիրպիրի արգասընտան կէլիրլէր։ Էյէր պու խասթալըգ միւտտէթլի օլուր իսէ, պաշ աղըրըըը, ատէթա եօրղունլուգ, գարընտա պիր եանմա, աղըզ պօզուգլուգ, տիլ պաղլը օլուպ, պօյունտա պէօպրէքլէրտէ աղըրլըգ վէ կէօզլէրտէ գարանլըգ կէօրիւնիւր։ Պու խասթալըգ անճագ Տէգէնէլ Մէտեին սալտ Տր. Ճ. Ուիթի Բէյ Զօգ ինտէն կէօզէլ Փարգ օլունուր։ Սէյլէրդօն Բանիէա ուժիւնտա եափըլմըշ Պու խասթալըգա մուպթէլա օլանլար գարա ճիյէր վէ միտէ պօզուգլուգու վէ ճիյէր ինֆլամասիօնլարընա գարշը պու իլաճը գուլլանըրլար։ Պու խասթալըգ կէօզէլ պաշլաըպ եէրլիքլէրինէ գալըպ ...լըգ ինհայէթ Ամերիգա, Իսլանա, Լօնտրա։ Պու իլաճ ... իշլէթմէք իսթէյէնլէր ... Պէօյլէ կէօզէլ պիր իլաճ իլէ տէ կէօնտէրիլիր։ Պու իլաճ Լօնտրայի, Ամերիգայի Ֆարթինկթըն Բօստ Է. Գ. Նօ. 21տէ Ա. Ճ. Ուիթ Թարաֆընտան սաթըլըր։ Պու չիրոպ ահպապը հազիգիսինի վէ պիթթապ խասթալըգը տա քէօքիւնտէն ալֆ իտէր։

Սահիպի
Ա. Ճ. ՈՒԻԹ

21 Ֆարթինկթըն Բօստ Լօնտրա Է. Գ. Սթամպօլտա Եէնի Ճամի սօգագընտա Մ. Տէլլա Սուտանըն էճզախանէսինտէ վէ Պէյօղլունուն ճատտէսինտէ Մ Գանցիւք պիրատէրլէրինին Ինկիլիզ էճզախանէսինտէ վէ Գալաթատա Եիւքսէք գալտըրըմտա Մ. Վէլիցին էճզախանէսինտէ վէ պիլճիւմլէ սայիր տիւքքեանլարընտա պուլունուր։

Թօրատան վէ բէրաքէնտէ միւպայէաթ իչիւն Գալաթատա Զապըթա գուլլուգու պինասընտա Նօ. 95/7 տէ Ոսմանի Ինկլիզ մաղազասընտա մէմուրը մախսուսը ԷՏՄՕՆՏ ԳԱՐՈՒԱ. Նեւյօ միւրաճաաթ իթմէլի տիր։

ՎԼՈՒԱՌ

(ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԳՕՆԹԻ ԵՒ ՇԱՀԻՆԻ)

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԻ

109 Կալաթա, Սանտըգճըլար փողոց 109

—o—

Սոյն գործարանին մէջ մեծ խնամով կը պատրաստուին Եէնիճէի ընտիր բերքերէն՝ ամեն տեսակ ազնիւ ծխախոտ և հոտաւէտ Սիկար, որուն առաւելութեան կրնան փորձով վկայել ամէն ճաշակի տէր ծխողներ, և հաստատել թէ՝ մեր հռչակաւոր գործարանն իրաւամբ արժանացեալ է իւր նոր անուանակոչութեան, (այն է Վլուառ); վասն զի իւր նմանեաց մէջ միշտ յաղթանակած և ճոխն առած է։

Թէ՛ գաւառներէ և թէ օտար երկիրներէ արուած հրամաններն ինչ քանակութեամբ որ ըլլան, փութանակի և ճշդիւ կը գործադրուին։

Գիներն խիստ չափաւոր են։

Մասնաւորապէս Եւրոպա ղրկուելիք ապրանք ազատ են պանտրօլի տուրքէն ըստ մաքսային օրինաց։

Մեծ վաճառատուն ի Կալաթա, Սանտըգճըլար փողոց 109։

Մասնաճիւղ ի Կ. Պոլիս, Պալըգ բազար 165։

ՏԷՄԻՐՃԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԴՐԱՄԱԿԱՆ

ԴԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 28 ապրիլ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ
(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

Լոնտրա 3 ամիս, ղր.	110 5/8	առ Անգլ. լիր
Փարիզ 3 » Ֆր.	22 80	առ Օսմ. լիր

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմ. Քօնս. գոցուեցաւ	14.24
բացուեցաւ	14.25
կէս օրին	14.25
	Անգլ. լիր
Սօսիէթէ ժէնէրալ 6 0/0	5.28
» Օթօման	4, 5
Կ. Պոլսոյ Պանքան	10, 5
Քրէտի ժէնէրալ 6 0/0 Օսմ. լիր	7, 1
Փոխ. 1863 (Մուխթուն) 6 0/0 Ֆր.	82,
» 1865 » 6 0/0	74,—
» 1869 (Բինար) 6 0/0	72,
» 1872 (պօն տիւ թրէզօր)	27,25
» 1873 (Բինար) 6 0/0	67,
Րումէլիի երկաթուղի	60.25
Լաւրիում	165,
Թրամուէյ (Գ. Կ.) Օսմ. լիր	335,
Թղթադրամ »	870
[illegible]	30
[illegible]	——

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
(Օսմ. ոսկին 100 ղրշէն) Ղրշ.

Անգլիական ոսկի	110 10
Գաղղիական »	87 35
[illegible]	80 12
[illegible]	51 13
[illegible] թուղթ	888 2
» արծաթ (Նոր)	80 2
[illegible] տարբերութիւն	108 2
[illegible]	125
[illegible]	208 10
[illegible]	183
[illegible]	207
[illegible]	710

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 9 մայիս.

Անգլ. Քօնս.	101 15/16
Օսմ. »	13 1/4
Փոխ. 1865	16 3/4
» 1869	14 3/4
» 1871	68
» 1872	27 3/4
» 1873	13 1/2
» 1877	81
Պանք Օթօման	22 1/2
Ռուս. փոխ. 73ի	86 3/4
Եգիպտ. միացեալ	67 3/8
» արտօնաւոր	88 1/4
Տայրա Սանիէ	67 1/4
Փոխ. Ռօչիլտ	89
Փոխանակագիր Փարիզի վրայ	

Փարիզ 9 մայիս.

Գաղղ. Քօնս. 5 0/0	117.37 1/2
» » 3 0/0	84,02 1/2
Օսմ. Քօնս.	13,65
Փոխ. 1865 Ֆր.	86
» 1869	74,
» 1873	69,
Օսմ. Երկաթուղի	61,50
Պանք Օթօման	823,75
Քրէտի Լիօնէ	755,
Ռուս. փոխ. 5 0/0 (1877)	—
» » Արեւելեան	—
Իտալ. Քօնս.	89 95
Եգիպտ. միացեալ	342 50
Փոխանակագիր Լոնտ. վրայ	25,20

Վիէննա 9 մայիս.

Փոխ. Լոնտրայի վրայ	120.15
Րումէլիի երկաթուղի	28.70

JONAS BROOK
BROTHERS

BROOK'S PATENT GLACE THREAD 24

ԺԳՈՐԾԱՐԱՆ ԲԱՄՊԱԿԷԴԵՐՁԱՆԻ
ՔԷԶԻԼԻ ՄԱՔԱՐԱ ՊՐՈՒՔԻ

Թուրքիոյ համար ընդհանուր ներկայացուցիչ Պ. Պ. Սիմօման և Տօլլինկէր, Կ. Պոլիս, Պահճէ Գաբու Բասիմ փաշա խան։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITICH AND MERCANTILE
Insurance company

ՆՈՐԹ՚Հ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԸՐՔԸՆԹԸԼ

Լոնտրայի և Էտինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,000,000
Վճարեալ դրամագլուխ	450,000
Պահեստի դրամ հըրդեհի ճիւղէն գոյացեալ	1,156,690—1,606,690
1878ին զուտ հասոյթը	976,119

NORTHERN
Assurance company

ՆՕՐԹՀԸՐՆ

Լոնտրայի և Էպըրտինի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ դրամագլուխ	150,000
Պահեստի դրամ հըրդեհի ճիւղէն գոյացեալ	380,000—530,000
Զուտ հասոյթ 1879ի	351,000

Սարքագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն թէ իրենք վերոյիշեալ երկու ընկերութեանց միայն գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան տեսակէտով ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բըռնելու [illegible] ներկայացնել։

Դրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի Գալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն գաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութեան ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Սարքագրեալք, շոգենաւերը, առագաստանաւերն և անոնց մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած են ընկերութեան կողմէ։

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Գալաթիա Քիւմիւշեան խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն առ

և Տնօրէն ամեն գործառնութեանց — Գործակատարն յիշեալ Ընկերութեանց

ԳԱՌՆԻԿ Ց. ՍԵՐՈԲԵԱՆ — ՃՕՀՆ ՐԱՈՒԼ



ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ
ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ
1882 ԱՊՐԻԼ 15 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ
ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼ 30

ԲՈՍՖՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

ժամ — Եւրոպական եզերք — Թիւ

11 45 Ենիմահալլէէն Մէգարպուրնու, Պէօյիւքտէրէ, Թարապիա, Ենիք. (Ենիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) 32

12 15 Ենիքէօյ. ՍԹէնեա. Էմիրկ. Պօյաճըքէօյ. Բ. Հիսար. Պէպէք. (Արնաւուտգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 20

12 45 Բ. և Ա. Գավագ. Ենիմահալլէ. Մէգարպ. Պէօյիւքտ. Թարապ. Ենիք. (Ենիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)—(Ուրբ. օրերը ՍԹէն. Էմիրկ. Պօյաճ. Բ. Հիսար. Պէպէք.) 33

1 45 Ենիք. ՍԹէն. Էմիրկ. Պօյաճ. Բ. Հիսար. Պէպէք. (Պէպէքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի (Բացի ուրբաթէ.) 2

2 30 Ենիմահ. Մէգարպ. Պէօյիւքտէրէ. Թարապ. Ենիք. ՍԹէն. Էմիրկ. Պօյաճ. Բ. Հիսար, Պէպէք։ (Արնաւ. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի ի Պէպէք. —Ուրբաթ օրերը Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ Գապաթաշ։ 22

4 Մէգարպ. Պէօյիւքտ. Թարապիա. Ենիք. ՍԹէն. Էմիրկ. Պօյաճ. Բ. Հիսար. Պէպէք. Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկ. 33

6 15 Ենիմահ. Պէօյիւքտ. Թարապ. Պէյքօզ. Բաչապ, Ենիք. Էմիրկ. Գանլըճա. Բ. և Ա. Հիսար. Գանտ. Արնաւ. Չէնկէլք. Պէյլէր. Օրթաք. Գուզկ. Պէշիկ. Իւսկ. 4

8 15 Ա. և Բ. Գավագ Ենիմահ. Մէգարպ. Պէօյիւքտ. Թարապ. Պէյգօզ. Ենիքէ. Էմիրկ. Պօյաճըք. Բ. Հիսար. Պէպէք. Արնաւ. Գուրուչ. Օրթաքէօյ. Պէշիկթ. (Ուրբաթ օրերը ՍԹէնեա) 31

9 45 Մէգարպուրնուէն Պէօյիւքտէրէ. Թարապ. Ենիքէ. Էմիրկ. Բ. Հիսար. Արնաւ. Օրթաք. Պէշիկթ. 22

[illegible] եզերք

11 30 Պէպէք. Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթ. 22

12 15 Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթ. 4

12 30 Պէպէք. Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթ. 28

1 30 Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթ. Գապաթ. 32

2 20 Պէպէք, Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։ 20

3 30 Պէպէք. Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկթ. Գապաթ. (Բացի ուրբաթէ) 32

10 45 Բ. Հիսարէն ուղղակի կամուրջ 20

11 10 Պէպէքէն ուղղակի կամուրջ. (Բացի ուրբաթէ) 2

Ասիական եզերք

11 30 Արնաւ. Վանիք. Չէնկէլք. Պէյլէրպ. Գուզկ. Գապաթ. 2

12 15 Պէյք. Բաչապ. Բ.փ. մահ. Գանլ. Ա. Հիսար. Գանտ. (ժամ 1,5 ին Արնաւուտգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) Ուրբ. օրերը Վանիք. Չէնկէլք. Պէյլէրպ. Գուզ. 25

12 50 Արնաւ. Գանտ. Վանիք. Չէնկէլք. Պէյլէրպ. Գուզ. Պէշիկթ. (Բացի ուրբաթէ) 21

1 15 Պէօյիւք. Թարապ. Պէյքօզ. Բաչապահճէ. Գանլըճա. Ա. Հիսար. Գանտ. —ժամ 2 30ին Գանտիլլիի շոգենաւին պիտի հաղորդակցի։ (Ուրբ. օրերը Վանիք. Չէնկ. Պէյլէրպ. Գուզկ. Պէշիկթ.) 34

2 15 Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզ. Իւսկ. — Բացի ուրբաթէ։ 25

4 Պէյքօզ, Բաչապ. Բ. փ. մահ. Գանլ. Ա.Հիսար, Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. 28

9 Էմիրկ. Գանլճ. Բ. Ա. Հիսար, Գանտ. Արնաւ. Չէնկ. Պէյլէրպ. Օրթաք. Գուզկ. Պէշիկթ. Իւսկ.(Ուրբաթ օրերը ժամ 8.45ին Պէօյիւքտէրէէն ելնելով Պէյքօզ, Բաչապ. Բ. փ. մահ. պիտի հանդիպի) 21

10 30 Վանիք. Չէնկ. 28

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Եւրոպական եզերք

12 45 Պէշիկթաշ, Օրթաք, Գուր. Արնաւ. Պէպէք, Բ.Հիսար, Էմիրկ. Ենիք. Թարապիա, Պէօյիւքտէրէ, Ենիմահ։ 22

1 15 Գապաթ. Իւսկ. Պէշիկթ. Գուզկ. Օրթաք. Պէյլէրպ. Չէնկէլք. Արնաւ. Գանտ. Ա. և Բ. Հիսար, Գանլ. Էմիրկ. Ենիք. Բաչապ. Պէյքօզ Թարապ. Պէօյիւքտ. Ենիմահ. 4

2 45 Պէշիկթ. Օրթաք, Արնաւ. Բ. Հիսար, Պօյաճ. Էմիրկ. Ենիք. Թարապ. Պէօյիւքտ. Մէգար. 33

5 Գապաթ. Պէշիկթ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք, Բ. Հիսար, Պօյաճ. Էմիրկ. ՍԹէն. Ենիք. Պէյքօզ. Թարապ. Պէօյիւք. Մէգարպ. Ենիմահ. Գավագլար։ 34

6 45 Իւսկ. Պէշիկթ. Գուզկ. Օրթաք. Պէյլէրպ. Չէնկ. Արնաւ. Գանտ. Բ. Հիսար. Գանլ. Էմիրկ. (Ուրբ օրերը Ենիք. Թար. Պէօյիւքտ.) 21

8 15 Պէշիկթ. Օրթաք. Արնաւ. Պէպէք, Բ. Հիսար, Էմիրկ. Ենիք. Թարապ. Պէօյիւք. Մէգարպ. 22

10 30 Բ. Հիսար. Պօյաճ. Էմիրկ. ՍԹէն. Ենիք. Թարապ. Պէօյիւքտ. Մէգարպ. Ենիմահ. 32

11 15 Ենիք. Թարապ. Պէօյիւքտ. Մէգարպ. Ենիմահ. 34

11 35 Պէպէք, Բ. Հիսար, Պօյաճ. Էմիրկ. ՍԹէն. Ենիք. 20

[illegible] եզր

1 5 Ուղղակի Արնաւ. 32

1 30 Պէշիկթ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք 20

3 Ուղղակի Արնաւ. (Բաց ի ուրբաթէ) 32

10 Պէշիկթ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք, Բ. Հիսար. —Վասփորի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի ի Բ. Հիսար։ 20

10 30 Պէշիկթ. Գուզկ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք։ (Բաց ի ուրբաթէ)։ 2

11 10 Գապաթ. Պէշիկթ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք։ (Ուրբաթ օրերը ժամ 11ին) — Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի ի Պէպէք։ 28

11 40 Պէշիկթ. Օրթաք. Գուրուչ. Արնաւ. Պէպէք։ 22

12 Պէշիքթաշ, Օրթաքէօյ, Գուրուչէշմէ, Արնաւուտքէօյ։ 2

Ասիական եզերք

12 35 Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ.Ենիք։ —Բացի ուրբաթէ։ 2

1 30 Իւսկ. Գուզկ. Պէյլէրպ. Չէնկ. Գանտ. —Բացի ուրբաթէ։ 25

2 30 Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաչապ. Պէյքօզ (Ուրբաթ օրելը Բ. փաշա մահ.) 28

9 45 Գապաթ. Գուզկ. Պէյլէրպ. Չէնկ. Վանիք. (Գավագի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 25

10 15 Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Բ. փաշա մահ.Բաչապ. Պէյքօզ Մէգարպ. Ա. և Բ. Գավաք։ 33

10 55 Գուզկ. Պէյլէրպ. Չէնկ. Վանիք. Գանտ. Արնաւ. — Բացի ուրբաթէ (Պէյքօզի շոգենաւին պիտի հաղորդակցի ի Գանտիլլի) 4

11 20 Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բ. փ. մահ. Բաչապ. Պէյք. — Ուրբաթ օրերը ժամ 11ին Գուզկ. Պէյլէրպ. Չէնկ. Վանիքէօյ հանդիպելով) 25

11 40 Արնաւ. Գապաթ. Գուզկ. Պէյլէրպ. Չէնկ. Վանիք. 21

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Իւսկիւտարէն Կամուրջ				Կամուրջէն Իւսկիւտար			
ժամ		ժամ		ժամ		ժամ	
11 45				12 15			
12 30		6 20		12 45		7	
1		7		1 15		8 15	
1 30		8 10	Պէշիկթաշ	1 45		9	
2		9 20		2 15		9 35	Պէշիկթաշ
2 30		9 45		2 45		10	
3		10 5		3 15		10 15	
3 30		10 30		3 45		10 45	
4		10 50		4 15	Պէշիկթաշ	11 5	
4 45	Պէշիկթաշ	11 10		5		11 25	Գուզկ.
5 20		11 35		5 30		11 45	
5 50		12 5		6		12 5	Գուզկ.

(Շաբաթ օրերը Գուզկունճուք չպիտի հանդիպի)

ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԸ

Իւսկիւտարէն Կամուրջ				Կամուրջէն Իւսկիւտար			
ժամ		ժամ		ժամ		ժամ	
12 15		7		12 10		7	
1		8 10	Պէշիկթաշ	12 55		8	
1 45		8 40		1 40		8 50	Պէշիկթաշ
2 30		9 20		2 25		9 20	
3 15		9 50		3 10		10	
4		10 30		3 55	Պէշիկթաշ	10 30	
4 45	Պէշիկթաշ	11		4 40		11 5	
5 30		11 30		5 25		11 40	
6 15		12 5		6 10		12 5	